2022, ԱՊՐԻԼ Ա, ԹԻՎ 7 (603)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Ավետման տոնի առթիվ

Գործ՝ Վ. Սուրենյանցի

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում համայն մեր ժողովրդին Սուրբ Աստվածածնի Ավետման տոնի առիթով:

Այսօր բարեբանում ենք Սուրբ Աստվածածնին, որը հավատավոր հոգով եւ խոնարհ սրտով ընդունեց հրեշտակաձայն ավետիսը Աստծու Որդու աշխարհգալստյան՝ մարդկության փրկության եւ հարուցյալ կյանքի համար: Սուրբ Աստվածածինը մաքուր սրտից բխած հավատքի ու ներշնչման աղբյուր է բոլորի համար եւ օրինակ, որ հաստատուն մնանք առ Աստված սիրո, հույսի ու հավատարմության մեջ՝ նորոգվելու եւ վերափոխելու մեր կյանքը դժվարությունների ու մերօրյա տագնապների առջեւ:

Ավետման տոնն իր կենսատու խորհրդով տարիներ առաջ հռչակել ենք որպես Մայրության բերկրանքին սպասող կանանց օրհնության օր: Մաղթում ենք, որ Փրկիչ մեր Տերը շնորհազարդի բոլոր ընտանիքներին՝ մանկանց քաղցր ճիչով ու երջանկությամբ լցնելու իրենց հարկերը եւ բարօրության մեջ, ուրախ սրտով կրթելու եւ մեծացնելու ազգի ու մեր Սուրբ Եկեղեցու արժանավոր զավակներ:

Մեր հանապազ աղոթքն է, որ Տերը Սուրբ Աստվածածնի գթառատ բարեխոսությամբ խաղաղություն եւ օրհնյալ կյանք պարգեւի համայն աշխարհին, մեր երկրին ու ժողովրդին՝ արդար ու բարի գործերով շենացնելու ազգային եւ հայրենական մեր կյանքը:

Օրհնությամբ՝
ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

4 ապրիլի

ՄԹ խորհրդարանի Մեծ Բրիտանիա – ՀՀ բարեկամական խմբի անդամներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Միացյալ Թագավորության խորհրդարանի Մեծ Բրիտանիա – Հայաստանի Հանրապետություն բարեկամական խմբի անդամներին՝ գլխավորությամբ խմբի ղեկավար Թիմ Փոլ Լուութընի: Հանդիպմանը ներկա էր նաեւ Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Վարուժան Ներսեսյանը:

Ողջունելով ՄԹ Մեծ Բրիտանիա – Հայաստան բարեկամական խմբի պատվիրակության այցը Հայաստան՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը բերեց ներկաներին՝ Արցախի ժողովրդի իրավունքների պաշտպանության գործում աջակցության եւ մշտական ուշադրության համար: Նորին Սրբությունն իր մտահոգությունները հայտնեց Արցախի ժողովրդի խաղաղ ապրելու իրավունքի դեմ նոր ոտնձգությունների եւ շարունակվող ռազմական գործողությունների, ինչպես նաեւ հայկական պատմական հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանության խնդիրների առնչությամբ: Հայոց Հայրապետը կարեւոր նկատեց միջազգային հանրության հետեւողական ջանքերը՝ գերության մեջ գտնվողների վերադարձման ուղղությամբ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ գոհունակությամբ արձանագրեց ՄԹ Մեծ Բրիտանիա – ՀՀ բարեկամական խմբի եւ Մեծ Բրիտանիայի հայկական համայնքի միջեւ ձեւավորված սերտ գործակցությունը:

Իր խոսքում խմբի նախագահ Թիմ Փոլ Լուութընը կարեւորեց ջանքերի գործադրումը հանուն Արցախում խաղաղության հաստատման եւ արցախահայության ապահով կյանքի իրավունքի, նաեւ պատրաստակամություն հայտնեց այս կապակցությամբ Մեծ Բրիտանիայի խորհրդարանում իր աջակցությունը բերելու հայ ժողովրդին:

Այցի առիթով Ամենայն Հայոց Հայրապետն իր մասնավոր գնահատանքը հայտնեց Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի անդամ ու նախկին փոխխոսնակ բարոնուհի Քերոլայն Քոքսիհ՝ միջազգային տարբեր ատյաններում արցախահայության ազատ ու անկախ կյանքի իրավունքի պաշտպանության եւ Արցախին մշտապես ցուցաբերվող զորակցության համար:

Զրույցի ընթացքում ՄԹ Մեծ Բրիտանիա – Հայաստան բարեկամական խմբի եւ Լորդերի պալատի անդամ, Անգլիկան Եկեղեցու Քովենթրիի եպիսկոպոս Քրիստոֆեր Ջոն Բոքսվորթը Նորին Սրբությանը փոխանցեց Քենթրբերիի արքեպիսկոպոս Ջասթին Ուելբիի ողջույնները: Քովենթրիի եպիսկոպոսը նաեւ հետաքրքրվեց Ադրբեջանի վերահսկողության ներքո հայտնված տարածքներում հայկական հոգեւոր-մշակութային ժառանգության վիճակի մասին: Վեհափառ Հայրապետը տեղեկություններ փոխանցեց Մայր Աթոռի՝ Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգության հարցերով գրասենյակի կողմից սրբավայրերի պահպանության ուղղությամբ տարվող աշխատանքների վերաբերյալ:

6 ապրիլի

Վրաստանի խորհրդարանի նախագահին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Վրաստանի խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլիի գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով խորհրդարանի նախագահի այցը Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Նորին Սրբությունը կարեւորեց նման փոխայցելությունները եւ երկու երկրների միջեւ ընդլայնվող գործակցությունը՝ այն համահունչ նկատելով ժողովուրդների դարավոր բարեկամությանը: Նորին Սրբությունը, անդրադառնալով անկախության տարիներին երկու երկրների միջեւ հաստատված սերտ հարաբերություններին, նկատեց, որ հայ եւ վրաց ժողովուրդները միասնաբար հաղթահարել են բազմաթիվ դժվարություններ՝ պահպանելու իրենց ազգային ինքնությունը եւ հոգեւոր արժեքները:

Անդրադառնալով հայ եւ վրաց ժողովուրդների առջեւ ծառացած մարտահրավերներին եւ տարածաշրջանում տիրող բարդ իրավիճակին՝ Հայոց Հայրապետն ընդգծեց, որ երկու երկրները, անկախ իրենց շահերից եւ դիրքորոշումներից, պետք է զորավիգ լինեն միմյանց՝ հանուն հավատակից եղբայր ժողովուրդների բարօրության եւ անվտանգության:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ի դեմս պարոն Պապուաշվիլիի, իր երախտագիտությունը հայտնեց վրաց իշխանություններին հայ համայնքի նկատմամբ հոգատար վերաբերմունքի, Նորաշենի Սուրբ Աստվածածին եւ Սուրբ Նշան եկեղեցիների ամրակայման աշխատանքների, ինչպես նաեւ ռազմագերիների վերադարձման, տարածաշրջանում կայունության ու խաղաղության հաստատման ուղղությամբ գործադրած միջնորդական ջանքերի համար: ➥ էջ 2

Հոգեհանգստյան կարգ՝ համայնավար բռնապետության զոհ դարձած հոգեւորականների համար

Ապրիլի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Նահատակ հոգեւորականաց հուշապատի առջեւ, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ համայնավար բռնապետության զոհ դարձած հոգեւորականների համար:

Դեռեւս 2017 թվականին

Ամենայն Հայոց Հայրապետի կողմից ապրիլի 6-ը հռչակվել էր համայնավարական բռնապետության տարիներին հալածանքների ու աքսորի ենթարկված եւ նահատակված հոգեւորականների հիշատակության օր:

Արարողությանը Մայր Աթոռի միաբանությունն աղոթք բարձրացրեց առ Աստված՝ նահատակված հոգեւորականների հոգիների խաղաղության համար:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են նորաօծ եկեղեցականների նշանակումները: Վարդան քհն. Ներսիսյանը եւ Դանիել քհն. Մկրտչյանը ծառայության են նշանակվել ՀՀ զինված ուժերում, Ղեւոնդ քհն. Թազայանը եւ Հովսեփ քհն. Հարությունյանը ծառայության են կոչվել Վիրահայոց թեմում, Արսեն քհն. Իսրայելյանը եւ Արտակ քհն. Սուլթանյանն իրենց ծառայությունը կբերեն Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմում, Ադամ քհն. Մովսեսյանը ծառայության է նշանակվել Իրաքի հայոց թեմում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Վրաստանի խորհրդարանի նախագահին

↩ էջ 1

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ իր եղբայրական ողջույններն ու բարեմաղթանքները փոխանցեց Վրաց Ուղղափառ Եկեղեցու պետ Համայն Վրաստանի Իլյա Բ Կաթողիկոս-Պատրիարքին:

Իր հերթին Վրաստանի խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլին, անդրադառնալով տարածաշրջանում տիրող իրավիճակին, նշեց, որ խաղաղությունն այլընտրանք չունի, եւ այն երկու երկրների զարգացման ամենակարեւոր գրավականն է:

Պարոն Պապուաշվիլին նաեւ գոհունակությամբ խոսեց այցի դրական արդյունքներից, երկու երկրների միջեւ առկա փոխգործակցության եւ դրա զարգացման հեռանկարների մասին՝ տեղեկացնելով այդ ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումների վերաբերյալ: Վրաստանի խորհրդարանի նախագահը եւս կարեւորեց երկու ժողովուրդների միջեւ հարաբերությունների առավել սերտացումը:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ իր մտահոգությունները հայտնեց Ադրբեջանի վերահսկողության ներքո հայտնված տարածքներում հայկական հոգեւոր-մշակութային ժառանգության ոչնչացման եւ յուրացման քաղաքականության, Արցախի ու Հայաստանի նկատմամբ շարունակվող ոտնձգությունների կապակցությամբ:

8 ապրիլի

Ղրիմի Հանրապետության պատվիրակությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ղրիմի Հանրապետության պատվիրակությանը:

Նորին Սրբությունն իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց պատվիրակության անդամներին՝ աղոթելով տարածաշրջանում խաղաղության վերահաստատման եւ մարդկության կյանքում համերաշխության եւ փոխգործակցության ոգու զորացման համար:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետն անդրադարձ կատարեց Ղրիմի պատմության մեջ հայ համայնքի ունեցած կարեւոր դերակատարությանն ու ներդրմանը եւ համայնքի ներկայիս ազգային-հոգեւոր աշխույժ կյանքին: Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց Ղրիմի իշխանություններին՝ հայկական համայնքի նկատմամբ հոգատար վերաբերմունքի, ինչպես նաեւ եկեղեցաշինությանը ցուցաբերվող զորակցության համար:

Կրոնագիտական եզրույթների շուրջ

ՇԱՂԿՅԱԼ ԳԱՎԱԶԱՆ

Հին աշխարհում գավազանն իշխանության խորհրդանիշն էր: Գավազանի խորհրդավոր զորության մասին ակնարկ կա դեռեւս Ծննդոց գրքում (տես *L 37–42*):

Ծաղկյալ գավազանի վերաբերյալ սուրբգրային վկայություններն ուղղակիորեն առնչվում են նաեւ Մովսեսի եղբորը՝ Ահարոնին: Ահարոն (եբրայերեն՝ אַהֲרֹן) նշանակում է *«լեռնեցի, լեռնական, լեռնաբնակ»* (*Encyclopaedia Judaica, vol. 2, Jerusalem, p. 3–9*): Համաձայն Աստվածաշնչի՝ նա Ղեւիի ցեղից էր՝ Ամրամի եւ Հոքաբեթի որդին (տես *Ելք Զ 20, Թվոց ԻԶ 59*): Կրտսեր էր իր քույր Մարիամից, սակայն երեք տարով մեծ եղբորից՝ Մովսեսից (տես *Ելք Է 7*): Ահարոնն ամուսնանում է Ամինադաբի դուստր Եղիսաբեթի հետ եւ ունենում չորս որդի՝ Նաբադ, Աբիուդ, Եղիազար, Իթամար (տես *Ելք Զ 23*):

Աստված Ահարոնին, որն արդեն ութսուներեք տարեկան էր (*տես Ելք Է 7*), կանչում է Քորեբի մոտ՝ անապատ՝ Մովսեսին գործակից լինելու: Երկնային Հոր կամքին հնազանդվելով՝ Ահարոնը պետք է լիներ Մովսեսի «խոսափողը»՝ նրա փոխարեն խոսեր ժողովրդի եւ փարավոնի հետ (տես *Ելք Դ 16–17*): Երբ Մովսեսը, Աստծու հրահանգով, ջանում է հրեաներին ազատագրել եւ դուրս բերել Եգիպտոսից, Ահարոնն աջակցում է եղբորը, խոսում նրա փոխարեն, հրաշքներ գործում (տես *Ելք Է 8–13*): Ահարոնն իր գավազանը գցում է փարավոնի եւ նրա պաշտոնյաների առջեւ, ու ցուպը վիշապ է դառնում: Փարավոնը կանչում է եգիպտացի կախարդներին եւ իմաստուններին: Եգիպտոսի մոգերը եւս իրենց գավազանները գցում են գետնին, ու դրանք վիշապներ են դառնում: Սակայն Ահարոնի գավազանը կուլ է տալիս նրանց բոլորի գավազանները (տես *Ելք Է 8–13*):

Ահարոնը եղբոր՝ Մովսեսի հետ էր նաեւ իսրայելացիների՝ Եգիպտոսից պատմական ելքի ժամանակ (տես *Ելք Դ–ԺԶ*): Երբ Մովսեսն աղոթում է Ամենակարողին իսրայելացիների՝ ամաղեկացիների դեմ մղվող պատերազմի ժամանակ, Ահարոնը կրկին աջակցում է եղբորը. *«Եվ քանի որ Մովսեսի ձեռքերը հոգնելուց ծանրանում էին, Ահարոնն ու Ողը մի քար առան եւ նրա տակը դրեցին: Մովսեսը նստեց դրա վրա, իսկ Ահարոնն ու Ողը՝ մեկն այս կողմից, մյուսն այն կողմից նրա ձեռքերը բռնած բարձր էին պահում: Այսպիսով՝ Մովսեսի ձեռքերը մինչեւ արեւի մայր մտնելը բարձրացած մնացին: Հեսուն սրակոտոր արեց ամաղեկացիներին ու նրանց ողջ զորքը»* (Ելք ԺԷ 8–13):

Աստծու խոսքին հնազանդվելով՝ Ահարոնը Մովսեսի հետ բարձրանում է Սինա լեռը (տես *Ելք ԺԹ 24*): Նա եւ իր երկու որդիները՝ Նաբադն ու Աբիուդը, ինչպես նաեւ Իսրայելի ծերերից յոթանասուն տղամարդ ուղեկցում էին Մովսեսին, երբ վերջինս ուխտ էր կնքում Աստծու հետ (տես *Ելք ԻԴ 1, 9*):

Համաձայն Աստվածաշունչ մատյանի՝ Ահարոնը Բարձրյալի ընտրած եւ Նրա հրահանգով օծված առաջին քահանայապետն էր (տես *Ելք ԻԸ, ԻԹ,*). Աստծու կանխահայտ կամքով քահանայական իշխանությունն Ահարոնից ժառանգաբար պետք է փոխանցվեր նրա սերունդներին (տես *Ղեւտ. Ը–Ժ*): Աստվածային այս որոշման դեմ ըմբոստանում են Կորխը եւ իսրայելացիներից գրեթե երկու հարյուր հիսուն տղամարդ՝ առաջնորդներ, խորհրդականներ, որոնք եւ խստորեն պատժվում են (տես *Թվոց ԺԶ*): Այսպիսով՝ քահանայության բոլոր իրավունքներն ստանում են Ահարոնն ու իր որդիները (տես *Թվոց Դ 18*):

Ահարոնը ոչ միայն Իսրայելի քահանայապետն էր, այլ նաեւ դատավորը: Նրա բարեխոսությամբ է դադարում ապստամբ իսրայելացիների կոտորածը (տես *Թվոց ԺԶ 41–50*): Սուրբգրային բազմաթիվ հատվածներ վկայում են Ահարոնի խաղաղասիրության, անձնուրացության, համբերատարության մասին: Երբ նրա երկու որդիները՝ Նաբադն ու Աբիուդը, անհնազանդության պատճառով մոխրանում են Աստծու կրակից, նա խոնարհաբար ընդունում է կամքը երկնային Հոր (տես *Ղեւտ. Ժ 1–7*), որ կանխավ զգուշացրել էր. *«Դու, քո որդիներն ու քո նահապետական ընտանիքը պատասխանատու եք սրբարանի սպասավորության նկատմամբ կատարվող մեղսագործությունների համար, բայց միայն դու եւ քո որդիներն եք կրելու ձեր քահանայագործության ժամանակ ձեր կատարած զանցանքների պատասխանատվությունը»* (տես Թվոց ԺԸ 1):

Նշենք նաեւ, որ համաձայն սուրբգրային վկայությունների՝ Ահարոնը եւս, մյուս մահկանացուների նման, սխալական բնություն ուներ եւ երբեմն մեղանչում էր (ոսկե հորթի (կուռքի) ձուլումը (տես *Ելք ԼԲ*), Մովսեսին վատաբանելը (տես Թվոց ԺԲ), հավատի սասանումը (տես *Թվոց Ի 1–12*)), ուստի Աստված պատժում է նրան՝ թույլ չտալով մտնել Ավետյաց երկիր (տես *Թվոց Ի 12–13*): ➥ էջ 4

Ծաղկազարդի տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում



Ապրիլի 10-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի՝ Երուսաղեմ հաղթական մուտքի հիշատակը՝ Ծաղկազարդը: Տոնը տարիներ առաջ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ հռչակվել էր Մանուկների օրհնության օր:

Այս կապակցությամբ Առավոտյան ժամերգության ավարտին Սուրբ Տրդատի բաց խորանին Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեցին Անդաստանի արարողություն եւ մանուկների օրհնության կարգ: Այնուհետեւ Նորին Սրբությունն իր օրհնությունը բաշխեց Մայր Աթոռում համախմբված մանուկներին, իսկ հավատացյալներին բաժանվեցին Անդաստանի ընթացքում օրհնված ուռենու ճյուղերը:

Բերկրաշատ տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը Պատարագի սրբազան արարողությանը մասնակցեց Սուրբ Գայանե վանքում: Պատարագիչն էր Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն Վազգեն եպս Միրզախանյանը:

Անդրադառնալով տոնի խորհրդին՝ Վազգեն սրբազանն իր քարոզում մասնավորաբար նշեց. *«Երբ եկավ Երուսաղեմ մուտք գործելու ժամանակը, հրեական Զատիկն էր մոտենում, եւ ինչպես, հին ավանդության համաձայն, հրեաներն էին հինգ օր առաջ զատկական գառը տանում իրենց տուն, այնպես էլ Քրիստոս հինգ օր առաջ Երուսաղեմում էր, որովհետեւ այնտեղ ամբողջանալու էր այն մեծ վարդապետությունը, որի համար մարդացել էր Աստված»*:

Անդրադառնալով օրվա ավետարանական դրվագին եւ Ծաղկազարդի տոնին՝ սրբազան հայրը պատգամեց ներկաներին. *«Ծաղկազարդի տոնը եւս մեկ անգամ գալիս է կոչելու մեզ՝ Հիսուսի օրինակով (ինչպես Հիսուս մաքրեց Տաճարը) մաքրելու մեր սրտերն ու հոգիներն ամեն աղտեղություններից եւ աղոթքով, ապաշխարությամբ ու խոստովանությամբ բացելու մեր հոգու եւ սրտի դռները՝ այնտեղ բնակեցնելով մեր Տեր Հիսուս Քրիստոսին: Թող մեր միտքն ու սիրտը դառնան Նոր Երուսաղեմ»*:



Սուրբ Պատարագի ավարտից հետո Սուրբ Գայանե վանքի շրջափակում կատարվեց մանուկների օրհնության կարգ, որի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետը վերստին իր օրհնությունը բաշխեց տոնի առիթով Մայր Աթոռ ժամանած երեխաներին:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Համաստեղի «Սպիտակ ձիաւորը» վեպը

Վայրենիքի կերպարը կերտելու տարբեր սկզբունքներ կան՝ նյութ ունենալով ներկան, մոտիկ անցյալն ու պատմությունը: Մոտիկ անցյալին են ուղղված գրական գործեր, որոնք պատմական երկեր՝ պատմավեպեր չեն, բայց պատմական իրադարձություններով հագեցված պատմական որոշակի մի շրջանի գեղարվեստական մարմնավորումներ են: Այդպիսին են Համաստեղի «Սպիտակ ձիաւորը» (*«Սպիտակ ձիաւորը» վեպն առանց 3-րդ եւ 4-րդ գլուխների տպագրվել է Բոստոնի «Հայրենիք» ամսագրում (1931, թիվ 7—1933, թիվ 12), այնուհետեւ առանձին գրքով՝ Լոս Անջելեսում (հ. 1—2, 1952): 1953-ի մարտին Ս. Վրացյանին հասցեագրած նամակում Համաստեղը տեղեկացնում է, որ արդեն ստացել է վեպի 1-ին հատորը եւ շուտով կազմատուն կուղարկի 2-րդը: Այսինքն՝ վեպը, ըստ էության, պատրաստ է եղել 1953-ին: Նշված նամակում նաեւ ավելացնում է. «....ես ավելին չէի կրնար կրճատել» (Համաստեղ, «Նամականի», Ե., 2003, էջ 330)*), Կ. Զարյանի «Նաւը լերան վրայ» (1943, Բոստոն), Գ. Մահարու «Այրվող այգեստաններ» (Երեւան, 1966), Խ. Դաշտենցի «Ռանչպարների կանչը» (Երեւան, 1979) վեպերը, Մ. Գալշոյանի «Մարութա սարի ամպերը» պատմվածաշարը (1980, Երեւան): Ավարտվելու դեպքում այս բնույթի պետք է լիներ Ա. Իսահակյանի «Ուստա Կարո» վեպը:

Համաստեղի համար հայրենիքը նախ բնաշխարհն ու գյուղաշխարհն էր՝ իր մարդկանցով ու կենդանիներով, կյանքի ամենօրյա իր պատմությամբ, եւ նա ավելի հայտնի է որպես տեղագրական մանրանկար իրական պատմվածքների վարպետ: «Գիւղը» (1924), «Անձրեւ» (1929) ժողովածուներն աչքի առաջ ունենալով՝ Ա. Չոպանյանը գրում էր. «Իր տեսողութեան նորութիւնը կը կայանայ բացարձակ առարկայականութեան մը մէջ: Լիակատար իրապաշտ է ինք: Համաստեղ հարազատ եւ վճիտ ձայն մըն է, որուն մէջեն գիւղն ինքզինքը կ'երգե (*Ա. Չոպանեան, Համաստեղ եւ գիւղը հայ գրականութեան մէջ, Դէմքեր, Փարիզ, 1929, էջ 183*)*:

Մեր ձեռքին վեպի երրորդ հրատարակությունն է՝ մեկ հատորով (*Երեւան, «Արմավ», 2016, 788 էջ*): Այդ աշխարհի իրական ժամանակը, «որուն մէջեն գիւղն ինքզինքը կ'երգե», նրա համար փակվեց ցեղասպանության սեւ վարագույրներով, թեեւ ինքը, ԱՄՆ տեղափոխված հոր հորդորով, 1913-ին էր դուրս եկել երկրից: Առարկայականը նրա մեջ աստիճանաբար շաղախվեց երեւակայությանը եւ դարձավ տեսիլք: Ահա գաղափարական այս հայացքով գրվեց նրա «Սպիտակ ձիաւորը» վեպը, որ շարունակում է մնալ գրական քննադատության, ընդհանրապես՝ հայագիտության տեսադաշտում, քանի որ ծրագրային գործ է ոչ միայն գեղարվեստի գեղագիտության ու տեսության առումով, այլեւ պատմաքաղաքական գաղափարների որոշակի դրույթների առաջարկությամբ:

Վեպը բացող «Մի քանի խօսք»-ում հեղինակը գրում է. ««Սպիտակ ձիաւորը» սկսայ գրել 1931-ին, երբ երկար ճամփորդութենէ մը նոր էի դարձեր Ամերիկա: Ծանր էր տեսնել անապատէն դուրս եկած, շուար ժողովուրդ մը, ցամքած մարմնով ու խոհուն աչքերով: Աւելի ծանր էր տեսնել, Տէրզօրի մոտ, Ճիզիրէի անապատին այն վայրը, ուր 40 000 հայեր ինքնիրենց վրայ քայքայուած՝ աւազներուն վրայ ձգած են կմախքներ միայն: Ծանր էր մանաւանդ այդ աւազներէն վերցնել գանկ մը ու ճամբորդել անոր հետ: Վէպը փնտռտուք մըն է մեր հոգեկան աշխարհին ու աշխարհագրական ցամաքին: Փորձած եմ տալ ժողովուրդի մը հերոսական մարտնչումները» (էջ 5):

Պատկերման ժամանակը, ըստ 1952 թվականի հրատարակության, «Վէպի շրջանն է — վաթսունամեակ մը մեզմէ առաջ» (էջ 6), այսինքն՝ 1890-ական թվականները:

Սա պատմաքաղաքական ծրագիր ունեցող վեպ է, բայց պատմական վեպ չէ: Այդ կապակցությամբ հեղինակը գրել է. «Ոմանք

վէպի մէջ ուզած են պատմական ճշտութիւններ տեսնել, առանց անդրադառնալու, որ «Սպիտակ ձիաւորը» պատմական վէպ չէ, այլ շրջանի մը ոգորումները, ինչքան որ ես ինքս ծանօթ եղած եմ, կամ այդ աշխատանքը ինկած է իմ կարողութեան սահմաններուն մէջ» (*ԳԱԹ, Համաստեղի ֆոնդ, 5*)*:

Գեղարվեստական մտածողության այս համակարգը ներկայացնենք նաեւ Իսահակյանի դիտանկյունից: Ահա նրա 1925 թ. հուլիս 21-ի նամակը Վենետիկից Վահան Նավասարդյանին. ««Ուստա Կարոյի» մեջ մեր կյանքի վերջին 20—25 տարին է ամփոփված, սկսած 1904 թվից մինչեւ այսօր <....> այ թե վեպս ավարտած լինի բոլշեւիզմի փլումով... Պատմական վեպ չէ, այլ հոգեբանական, փիլիսոփայական եւ շա՛տ տարրեր կան մեջը. էպոս. րոման, լիրիկա, հյումոր... դա օվկիանոս է, վեպ չէ: Զարենցը հիացավ, զարմացավ եւ դասեց հավասար Դոն Քիշոտի, Վայնա ի միր (Պատերազմ եւ խաղաղություն), Հոմերոսի հետ: Անդիբոլշեւիկյան վեպ է (այս չասացի Զարենցին, մյուս կտորները կարդացի)» (Ավետիք Իսահակյանի նամակները, Գահիրե, 1959, էջ 17): Միջանկյալ ասենք, որ 1926 թ. նամակներից մեկում Իսահակյանը Ռուբեն Դարբինյանին գրում է. «Համաստեղին շատ ջերմ բարեւներ եւ ասա, որ Խորհրդային Հայաստանում շատ են սիրում եւ գնահատում նրա արվեստը» (*նույն տեղը, էջ 68*)*:

Համաստեղի պատմագեղարվեստական այս դիրքորոշումը ճամապարհ բացեց: «Նաւը լերան վրայ» ստեղծագործության «Այս վէպը» առաջաբանում Կ. Զարյանն իր երկը «բուն իմաստով պատմական վէպ» չի համարում, այլ մի քանի հայ հոգիների պատմություն, որոնք ապրել են «մեր ազգային կեանքի ամենաբախտորոշ շրջաններից մեկում». նրա հավաստումով՝ պատկերված հերոսները երեւակայական են, բայց նրա իսկ դիպուկ վերապահությամբ՝ «երեւակայականը աւելի իրական է, քան ինքը իրականութիւնը», որ նշանակում է. «....սա պատմութեան գիրք չէ, այլ ոգու պատմութիւն» (*Կ. Զարեան, Նաւը լերան վրայ, Բոստոն, 1943, էջ 3*)*:

Պատմության ազատ գեղարվեստական վերարտադրությունը, բայցեւ պատմական փաստերի ու հերոսների ուղեկից ու կազմակերպիչ դերը տարբեր համամասնությամբ բնորոշ են նաեւ նշված հեղինակների հիշյալ գործերին:

Համաստեղի վեպում ժամանակը հայոց ազատագրական պայքարի տարիներն են՝ 1890-ական թվականները, հերոսների շարքերում կան պատմական քողարկված դեմքեր, բայց վեպը, կրկնում ենք, պատմական չէ: Հայոց պատմությունն է հայոց հայրենիքով, իրական բնաշխարհով ու աշխարհագրությամբ եւ հայրենիքի ազատագրման երեւակայական ծրագրերով: Վեպն ունի գաղափարական որոշակի ուղղվածություն, այլ կերպ՝ գաղափարապաշտ (ռոմանտիկական) վեպ է, որ ցեղասպանությունից եւ հայրենի երկրի կորստից կարճ ժամանակ անց ժողովրդի մեջ փորձում է ներարկել ոգու կորով, հաղթանակի թեկուզեւ երազային բերկրանք: ➥ *էջ 4, 8*

ԾԱՂԿՅԱԼ ԳԱՎԱԶԱՆ

➥ էջ 2

Համաձայն Սուրբ Գրքի՝ Ահարոնը մահանում է 123 տարեկանում (տես *Թվոց ԼԳ 39*) եդոմացիների երկրում (Մեռյալ ծովից հարավ)՝ Հոր լեռան վրա, եւ իսրայելացիները երեսուն օր սգում են իրենց քահանայապետի մահը (տես *Թվոց Ի 23–30*): Իսկ Բ Օրինացում գրված է, որ նա մահանում է Սադայում եւ թաղվում այնտեղ. նրա փոխարեն որդին՝ Եղիազարն է դառնում քահանայապետ (տես *Ժ 6*):

Հետագայում Իսրայելի քահանաները կոչվում են «Ահարոնի որդիներ» (*տես Ա Մնաց. ԺԲ 27*), որոնք Հուդայի եւ Բենիամինի երկրում տասներեք քաղաք են ստանում՝ որպես սեփականություն (տես *Հես. ԻԱ 13–19, Ա Մնաց. Զ 57–60*):

Ահարոնը հիշատակվում է նաեւ նորկտակարանյան բազմաթիվ հատվածներում: Եբրայեցիներին հասցեագրված թղթում գրված է. *«Ամեն մի քահանայապետ, մարդկանց միջից ընտրվելով, պաշտոն ունի մարդկանց կողմից Աստծու հետ հարաբերության մեջ լինելու.... Եվ որեւէ մեկը ոչ թե ինքն իրենից է առնում այս պատիվը, այլ առնում է նա, ով Աստծուց է կանչված, ինչպես որ՝ Ահարոնը»* (տես Եբր. Ե 4), այսինքն՝ մեկ անգամ եւս ընդգծվում են Ահարոնի աստվածընտրյալ լինելը եւ այն, որ առանց երկնային Հոր կամքի ու շնորհի՝ որեւէ մեկը չի կարող քահանայագործել:

Համաձայն Նոր Կտակարանի՝ քահանայությունն Ահարոնին Աստծուց էր տրված, «քանի որ ժողովուրդը նրանով էր օրենք ստացել» (*Եբր. Է 11*), սակայն նրան փոխարինում է մեր Տեր Հիսուս Քրիստոս՝ քահանան «ըստ Մելքիսեդեկի կարգի» (*Եբր. Ե 4–6, Է 11–19*):

Ահարոնի սերնդից էր նաեւ Հովհան Մկրտչի մայրը՝ Եղիսաբեթը (տես *Ղուկ. Ա 5*):

Ըստ Եկեղեցու նշանավոր հայր Կյուրեղ Ալեքսանդրացու՝ Ահարոնին ընտրել էր Ինքը՝ Աստված, եւ հենց նրա օգնությամբ իսրայելացիները պետք է ազատագրվեին փարավոնի գերությունից:



Կարճառոտ ներկայացնենք նաեւ «ծաղկյալ գավազան» եզրույթի ծագումը: Թվոցում գրված է՝ անապատում դեգերելու ժամանակ իսրայելացիներն ըմբոստանում են Մովսեսի եւ Ահարոնի դեմ ու դժգոհում, որ Ղեւիի ցեղն է ընտրվել Տիրոջը ծառայելու համար (տես *Թվոց ԺԶ 41–43*). այս խնդիրը լուծելու համար Աստված խոսում է Մովսեսի հետ եւ ասում. *«Դիմիր իսրայելացիներին եւ նրանցից՝ նրանց ցեղերի բոլոր իշխաններից մեկական գավազան ա՛ռ ըստ իրենց նահապետների ընտանիքների թվի՝ ընդամենը տասներկու գավազան: Յուրաքանչյուր իշխանի անունը կգրես իր գավազանի վրա: Ահարոնի անունը կգրես իր գավազանի վրա.... Դրանք կդնես վկայության խորանում, որով պիտի երեւամ քեզ այնտեղ: Թող ծաղկի այն մարդու գավազանը, որին ես կընտրեմ: Դրանով կվերացնեմ ձեր դեմ ուղղված իսրայելացիների տրտունջը»* (Թվոց ԺԷ 1–5): Հաջորդ օրը Մովսեսն ու Ահարոնը մտում են վկայության խորան եւ տեսնում, որ Ահարոնի գավազանը՝ տրված Ղեւիի տան կողմից, ճյուղեր է արձակել, ծաղկել եւ ընկույզ է բռնել (տես *Թվոց ԺԷ 8*): Այսպիսով՝ Աստված մեկ անգամ եւս հաստատում է, որ Ինքն է քահանայագործության համար ընտրել Ղեւիի ցեղն ու Ահարոնին:

Ամենազոր Աստված նաեւ ասում է Մովսեսին. *«Ահարոնի այդ գավազանը դի՛ր մյուս վկայությունների կողքին ի պահ, որպես նշան անհնազանդ որդիների, որպեսզի դադարի նրանց տրտունջն իմ դեմ, եւ նրանք չմեռնեն»* (Թվոց ԺԷ 10):

Ծաղկյալ գավազանը նաեւ հրաշագործ զորություն ուներ. Աստված Ինքն է հրահանգում. *«Այն գավազանը, որ օձ դարձավ, կառնես ձեռքդ եւ դրանով նշաններ կգործես»* (Ելք Դ 17): Այդ են վկայում սուրբգրային բազմաթիվ դրվագներ (տես *Ելք Է 8–12, ԺԴ 15–16, ԺԷ 5–6, ԺԷ 9–13, Թվոց Ի 8–11*):

Ծաղկյալ գավազանի ծաղիկներն ու պտուղը չեն թոշնում եւ չեն չորանում. հետագայում այս գավազանը, ի թիվս այլ սրբությունների, դրվում է Ուխտի տապանակում (տես *Եբր. Թ 4*):

Քրիստոնեական մեկնողական գրականության մեջ Ահարոնի ծաղկյալ գավազանը սուրբ Կույս Աստվածածնի այլաբանական խորհրդանիշն է համարվում եւ այս խորհրդաբանությամբ է արտացոլվում նաեւ պատկերագրության ու մանրանկարչության մեջ:

Ըստ Եփրեմ Ասորու՝ ինչպես առաջին քահանայապետ Ահարոնի գավազանը Աստծու կամոք եւ զորությամբ ծաղկեց ու պտուղ տվեց, այնպես եւ սուրբ Կույս Մարիամը պտղաբերեց՝ ծնելով մարդկության Փրկչին: Կյուրեղ Ալեքսանդրացին եւս իր երկերում սույն տեսակետն է արտահայտում:

Հայրաբանական գրականության մեջ նաեւ տեսակետ է արտահայտվել, ըստ որի՝ Ահարոնի ծաղկյալ գավազանը խորհրդանշում է մեր Տեր Հիսուս Քրիստոսի ծնունդն ու հարությունը: Ահարոնն առաջին քահանայապետն էր, իսկ Աստծու Որդին՝ «հավիտյան քահանա ըստ Մելքիսեդեկի կարգի» (*Եբր. Է 17*), եւ Ահարոնի գավազանի ծաղկումը վկայում էր Մեսիայի հարության մասին: Քանզի Եսայի մարգարեն կանխասել էր. *«Հեսսեի արմատից գավազան պիտի ընձյուղվի, ծաղիկ պիտի բուսնի այդ արմատից, նրա վրա պիտի իջնի Աստծու Հոգին....»* (ԺԱ 1–4): Իսկ Սաղմոսաց գրքում գրված է. *«....Տերը քեզ իշխանության գավազան կուղարկի Սիոնից, եւ դու կիշխես քո թշնամիների մեջ»* (ՃԹ 1–3):

Նոր Ուխտում «գավազան» բառը գործածվել է երկնային արքայության հավիտենականությունը ցույց տալու համար. *«Աստվա՛ծ, քո աթոռը հավիտյանս հավիտենից է. քո արքայության գավազանը՝ ուղղության գավազան»* (Եբր. Ա 8):

Ահարոնի ծաղկյալ գավազանը խորհրդանշում է նաեւ մարդու հոգեւոր վերածնունդը, որն իրագործվում է Աստծու զորությամբ եւ Սուրբ Հոգու շնորհներով (*Բ Կորնթ. Դ 16–18*): Եռամեծ վարդապետ սբ Գրիգոր Տաթեւացին ասում է. *«....մարդն արդարութեան գործով գեղեցիկ է կանաչացեալ եւ ծաղկեալ բարի պտղով. եւ յորժամ ցրտանայ ի հաւատոցն եւ ի սիրոյն Աստուծոյ, եւ սատանայական հողմն շնչէ ի նա, չորանայ եւ մերկանայ յամենայն բարութեանց: Եւ յորժամ շնչէ հարաւ մարդասիրութեանն Աստուծոյ ի հոգիս մեր, դարձեալ կանաչիմք եւ ծաղկիմք որպէս զառաջինն»* (*Գիրք քարոզութեան, որ կոչի Ամարան հատոր, գլուխ ՀԶ*):

Հայտնության գրքում գավազանը ցույց է տալիս հոգեւոր իշխանությունը (տես *Բ 26–29*):

Արփինե ՉԱՆԹԻԿՅԱՆ

Համաստեղի «Սպիտակ ձիաւորը» վեպը



➥ էջ 3

Դա պայմանավորված է նախ կիսաառասպելական, ասես էպոսածին, գլխավոր հերոսի՝ Մարտիկի կերպարով ու հայրենասիրական գործունեությամբ եւ մյուս գլխավոր հերոսի՝ Չերչի Կիրոսի կազմակերպական ջանքերով, որով միաբանվում են հայկական ուժերը եւ, վերջում քրդական ուժերի հետ դաշնակցած, հաղթում թուրքական բանակին: Սա տարիների պայքարի ցանկալի ավարտն է, որ ներկայացվում է որպես իրականություն. ահա այստեղից էլ վեպի ծրագրային գաղափարապաշտական ուղղվածությունը կամ այլ կերպ՝ նեոռոմանտիզմը:

Այդ մասին կան նաեւ հեղինակային հիմնավորումներն ու վկայությունները: Հիշյալ «Մի քանի խօսք»-ում գրում է. «Հայ ժողովուրդը րօմանթիք է իր ապրումներով, իր հաւատքով ու հերոսներով: Առաւելապէս այդ շաղախին կը պարտի իր գոյութիւնը, այլապէս՝ եթէ յանկարծ գիտակցէր տառապանքի իրականութեան, ան վաղուց կը չքանար որպէս ազգ» (էջ 5): Վեպի ռոմանտիկական բնույթը Համաստեղը բացատրում է հայ ժողովրդի համանման բնավորությամբ, այլ կերպ՝ պատմական հոգեբանությամբ՝ պարտությունների դեմ հոգեւոր հաղթանակ, մահվան դեմ կյանք, եւ համապատասխան գեղարվեստով տոգորում նրա կենսագոյությունը:

1960 թ. դեկտեմբերի 30-ին Գրիգոր Շահինյանին գրում է. ««Սպիտակ ձիաւոր»ի շրջանը կարավաններու շրջանն էր՝ րօմանթիզմի շրջանը: Արեւելեան րօմանթիզմը խառնուած էր հեքիաթային որոշ գոյներու հետ: Այդ գոյները պահուած են հարազատ ըլլալու համար շրջանին, ինչպէս Մարտիկն է, Հաճի Մուսան է: Նոյնիսկ մեր ֆիտայիներու հաւատքին ու հզօր պայքարներուն հետ հէքեաթային հերոսներ ու գիծեր կան, թեեւ այնքան իրական» (*Համաստեղ, «Նամականի», Երեւան, «Մուղնի», 2003, էջ 276*): Այս դիտարկմանը Գ. Շահինյանն իր հերթին ավելացնում է. «Տեսլական այս աշխարհը արեւելեան է իր մթնոլորտով. գիւղն է հիմը անոր: Համաստեղի Խարբերդի գիւղերէն ստացած տպաւորութիւններուն վրայ աւելցած է նաեւ ժողովրդային հէքեաթներու ոգեշնչած գերբնական աշխարհի մը մթնոլորտը: <....>: Հէքեաթի այս մթնոլորտը կը փոխադրուի ՍՊԻՏԱԿ ՁԻԱՒՈՐԻ մէջ, որ Արեւելքի վէպն է, ընդհանրապէս, որքան բո՛ւն Հայաստանի» (*Գ. Շահինեան, Համաստեղ, Պեյրութ, 1961, էջ 14, 59*):

Հեքիաթի շաղախի մեջ որքան իրական, նույնքան անիրական աշխարհն է, որ իր մեջ առնում է առասպել, հովվերգություն, ժողովրդական չափազանցություն, դյուցազներգության տարրեր: Այո՛, այդպես է, ուստի ավելորդ է Գ. Շահինյանի հերթապահ հաջորդ դիտարկումը, ըստ որի՝ «իրապաշտ վէպ ըլլալէ, առասպելի եւ հում իրականութեան տարօրինակ մէկ խառնուրդը կը ներկայացնէ...» (*Նույն տեղը, էջ 167*):

Վեպի իրական հիմքերի մասին վկայում է հեղինակը. «Հայաստանը աշխարհագրական սահման ըլլալէ աւելի հոգեկան քարտէս եղած է, ըսել կ'ուզեմ, քարտէսի գիծերու հետ գործ ունեցած չեմ: Գործածած եմ գիւղի, քաղաքի, ճամբաներու, լեռներու եւ քրտական ցեղերու անուններ միայն, ինչպէս անուններ են Կիրոս, Խալֆա, Վարդան, Մակար եւ շատ շատեր, որոնց ներքեւ կան իրական նկարագիրներն ու անձնաւորութիւնները» (էջ 6): Այս մտայնությունը եղել է ի սկզբանե եւ անմիջականորեն ուղղորդել նրան: 1934 թ. մայիսի 25-ին Ն. Աղբալյանին գրում էր. «Մեզ համար հայրենիքի գաղափարը արժեք ըլլալէ աւելի հեռաւոր կախարդանք է դարձեր» (*Համաստեղ, «Նամականի», էջ 47*):

Պատմական հերոսն իր գործունեության համար պատմական փաստեր պիտի պահանջեր, մի բան, որ իր պարտադրանքով կկաշկանդեր հեղինակին կամ կփոխեր շարադրանքի բնույթը՝ այն վերածելով պատմավեպի: Իսկ Մարտիկի գործողությունների մեջ հեղինակն ազատ է: Մարտիկը նման է իր ժամանակաշրջանի պատմական հերոսներին, բայց նրանցից եւ ոչ մեկը չէ: Այս մտայնությամբ իր պատասխանն է ստանում նաեւ հայկական ռոմանտիզմի երկու խոշոր ներկայացուցիչների՝ Ռաֆֆու եւ Մուրացանի գլխավոր վեպերի հերոսների ընտրության հարցը: Եվ Ռաֆֆու Սամվելը, եւ Մուրացանի Գեւորգ Մարզպետունին, պատմականորեն վկայված իրական հերոսներ լինելով հանդերձ, պատմության համար շատ երկրորդական հերոսներ են: Առաջին դեպքում կային Արշակունիները, կային ազդեցիկ նախարարական տոհմեր, երկրորդ դեպքում՝ Բագրատունիները, բայց հեղինակները հատկապես երկրորդական դեմքերին ընտրեցին գլխավոր հերոսներ, որպեսզի օգտագործեն նրանց մասին պատմագրության (Փավստոս Բուզանդ, Հովհաննես Դրասխանակերտցի) հաղորդած մեկ ոգեշունչ փաստը, մնացած հարցերում ազատ լինեն, ստիպված կառչած չմնան վկայություններին եւ ըստ իրենց պատկերացումների՝ հյուսեն ռոմանտիկական հայեցակարգի գրական հենքը:

«Սպիտակ ձիաւորը» վեպի յուրահատկությունն այն է, որ հերոսները եւ իրական են, եւ ստեղծական, որ ավելիով է պարուրում շարադրանքի հեքիաթային-առասպելական ազատ շունչը: Պատմական ժամանակի ու պատմական հերոսների մասին է, բայց գեղարվեստի համակարգում, որտեղ, ըստ պատմագրական հուշումների, լավագույն դեպքում կարելի է կռահել հերոսների նախատիպերը (*տես Ռ. Տեր-Մինասեան, «Հայ յեղափոխականի մը յիշատակները», հ. 1–7, Երեւան, 1990–1991*): Ըստ էության՝ Համաստեղը կատարել է կուսակցական առաջադրանք, որը, ինչպես երեւում է նամակագրությունից, ուղղորդել է Ս. Վրացյանը (*Համաստեղ, «Նամականի», էջ 330–358*), իսկ ոգեւորողները շատ էին, այդ թվում՝ Ն. Աղբալյանը, Կարո Սասունին:

Չերչի Կիրոսը կերպավորում է Հրայր Դժոխքին (Արմենակ Ղազարյան, 1864–1904), Մալխասը, որը երազում էր այգի մշակել ու վարունգ աճեցնել՝ Գեւորգ Չաուշին (Չավուշ, Գեւորգ Ղազարյան, 1870–1907): Նայիրյանի նախատիպ ընդունված է համարել Նիկոլ Աղբալյանին: Այս կապակցությամբ ավելացնենք՝ Գ. Նայիրյան ստորագրությամբ ժամանակին հոդվածներով հանդես էր գալիս Ավետիս Ահարոնյանի որդին՝ Հայաստանի Առաջին Հանրապետության դատախազ Վարդգես Ահարոնյանը (*տես նրա «Հայ գրականությունը 1919 թվին» հոդվածաշարը, «Յառաջ», Երեւան, 1920, թիվ 20, 28, 39, 40*): Խորքում Նայիրյանը պայմանականորեն հայոց անմահ պատմիչն է՝ Խորենացին, որ Մատյանը ձեռքին՝ ժողովրդի հետ է բոլոր ժամանակներում:

Ընդգրկումով եւ կառուցվածքով սա համապատկերային հարաճուն վեպ է: Կենտրոնը Հայոց Սասուն աշխարհն է: Գործողությունների տարածման ընթացքում երկրով մեկ հիշատակվում են Կարին, Բիթլիս, Ադանա, Կեսարիա (Փոքր Հայքի Մաժաք), Դիարբեքիր, Երզնկա, Դերսիմ, Խարբերդ, Տիգրանակերտ, Վան, Սղերդ քաղաքները, որպես տարածաշրջանային գյուղաքաղաք՝ պայմանական անունով Գարափունարը եւ տասնյակ հայ եւ քուրդ գյուղեր՝ Բերդակ, Վարդաձոր, Հացեկ, Կարմրեկ, Թիլ, Թորթան, Քղի, Կարկառ, Գոմ, Շինավան, Շեփիկ, Այգեստան, Հնձոր, Հնագրակ, Հողդար, Խոտրջուր, Դատվան, Տանձիկ, Դղեր, Ախուռ, Ղամիշլու, Իզոլի, Ջեյվա, Հայտարան, Քնզոր... ➥ էջ 8

ԵՐԲ ԵՂԵՌՆԵՐԸ ԿԱՆԳՈՒՆ ԵՆ

Սկիզբը՝ թիվ 3–6

Վակիրճ, սակայն սպառիչ է Ալաջաջյանի կողմից ծովերից այն կողմ նստած Ալբիոնին տրված բնութագիրը, որը հավասարապես վերաբերում է մյուս բոլոր մեծ տերություններին. *«Անգլիան իր շահերի շունն է»* (էջ 70):

Ողբերգական դեպքերի զարգացումներին զուգընթաց այդ ճշմարտությունն ամրակայվում է վեպի նաեւ այն հերոսների մտածումներում, որոնք իրենց հույսերը դեռ կապում էին եվրոպական տերությունների հետ: Ֆրանսիացի ենթասպա Դյուրեի հետ (որը միակ ազնիվ ֆրանսիացի զինվորականն է ու լավ գիտի իր պետության խարդավանքների դրդապատճառները) զրույցից, հայ լեգեոնական ուժերի զինաթափվելուց ու մանավանդ այրված Մարաշից դեպի Սիրիա փախչող հայ գաղթականներին տեսնելուց հետո Փառենը եւս հանգում է այն վերջնական մտքին, որ ամեն գնով պետք է զինել Զեյթուն վերադարձած ժողովրդին, որպեսզի մարաշցիների ճակատագիրը չունենան, որ Արամի *«բնական կյանք»* ստեղծելու ձգտումը ոչ մի հենարան չունի, որ զենքը պաշտպանելու միակ միջոցն է՝ փրկելու ոչ միայն մարդկանց, այլեւ հողը, տունը, ունեցվածքը, հոգեւոր արժեքները, ամեն հայկականը, եւ որ այդ փրկությունը կարող է լինել երկու ձեւով՝ փրկվել կռվելով ու զոհվելով եւ փրկվել կռվելով ու ազատվելով. երկու դեպքում էլ ելքը զենք ունենալն է:

Ընտրությունը միակն էր, եւ այն հաստատվել էր դարերի փորձառությամբ, որի վերաբերյալ հստակ եզրահանգումներ ունի նաեւ Փառենը. *«Հենց որ զեյթունցին վայր չի դրել զենքը, ստեղծվել է մի պետություն, որ գրի է առել, ասենք, Պապուկ քահանան ս. Հրեշտակապետ եկեղեցու ձեռագիր «Հայսմավուրքի» վերջում: Եվ ի՞նչ է Զեյթունից մինչեւ Վերջնասար հասնող հողակտորը, եթե ոչ ննջարան՝ հերոսների դամբարան, ռազմադաշտ ու խեղդվող ազատության կյանքի վերակոչը: Քանի-քանի դար վայր չդրվեց զեյթունցու զենքը, եւ քանի-քանի դար սրբազան հուշարձաններ կանգնեցրինք: Միայն մեկ անգամ, լոկ մեկ անգամ զենք չվերցրեց Զեյթունը, 1915-ին... Անեծք, անիծյալ թվական... Եվ հերոսական դամբաններ չերեւացին, մեր շիրիմները մնացին անհայտ»* (էջ 152):

Փառենը, ի տես փլուզումների ու ավերների, իր օրագրություններում նշումներ է կատարում, որոնք յուրատեսակ *նամակներ* են՝ ուղղված հայ սերունդներին: Այդ գրությունները դրսեւորում են ոչ միայն Փառենի հոգում տիրող փոթորկումները, այլեւ մատնանշում են այն կորուստները, որոնք սպասվում էին Կիլիկիայի հայաթափությամբ՝ հավատափոխություն, հիշողությունների վերացում եւ այլն. *«Հրաժեշտի երգ եմ գրում, եւ հայ ժողովուրդը Կիլիկիայի համար կդառնա պատմություն, երգ, հառաչանք. Կիլիկիան էլ հայ ժողովրդի համար կդառնա պատմագիրք. Քարտեզ...»* (էջ 177):

Այս առումով վեպում շոշափվում են ոչ միայն վերը նշված մի շարք կարեւոր հարցեր, այլեւ մերօրյա տարաբնույթ արդիական խնդիրներ, որոնցից էլ տեղաբնիկների ու այլազգիների օսմանացումն ու ազգուրացումն են: Մահմեդականացման այդպիսի օրինակներով՝ բերդուսցիներ, կարամանլցիներ, որոնց նախնիները հայեր են եղել, Ալաջաջյանը ցույց է տալիս հավատքի, մշակույթի ու ինքնության այն կործանարար վախճանը, որ սահմանված է Թուրքիայի տիրապետության մեջ մտնող բոլոր ազգությունների համար (պատմական այդ իրողության հաստատումը չէ՞ այն, որ Առաջին համաշխարհայինի տարիներին 16–17 միլիոն հաշվվող թուրքերն այսօր 80 միլիոնն անց են):

Փլուզման ու կործանման գիտակցումը Փառենի աչքերից ցավի ու զայրույթի արցունքներ է հոսեցնում. *«Այդ արցունքները բխում էին բիբերից, եւ բիբերի մեջ ավերակված Ծամնդավն էր, մոխրացած մի հայսմավուրք, կիսափուլ Կարմիր բերդը, պատառոտված մի սաղմոս, մգլոտած մագաղաթներ, Կապանի բերդի մերկ սյուները* (Թուրքիան, նվաճելով տեղաբնիկ ժողովուրդների հայրենիքները, սեփականացնում էր նաեւ այնտեղ առկա պատմական ու մշակութային արժեքները եւ դրանք վերագրելով իրեն՝ զբոսաշրջության միջոցով ապահովում իր տնտեսության զարգացումը)՝ *Շողականը.... Շիրմաքարը գողացված՝ Օշին իշխանի հողաթումբը, տապալված խաչքարեր.... եւ այս բոլորին հաջորդող ս. Գեւորգ եւ ս. Աստվածածին եկեղեցիների անմարելի հրդեհները: Էլ ինչպե՞ս լաց չլիներ հսկան: Վեց հարյուր տարվա մի լաց էր, եւ արցունքները վեց հարյուր տարիների թացություն ունեին»* (էջ 82–83):

Թուրքերի եւ ֆրանսիացիների կողմից հայաբնակ Մարաշի երեքօրյա ռմբակոծության վերաբերյալ շատ ուշագրավ դիտարկում ունի գրողը, որն իր մեջ խտացնում է բոլոր ժամանակների նվաճողների վարկը. *«....ավերում են նրանք, ովքեր ոչինչ չեն ունեցել այս երկրի վրա, այս հողում, չեն տվել ոչ մի բարիք.... ավերում են, որովհետեւ երկիրը իրենցը չէ, եկել են տիրապետելու. եւ փախչողն է այդպես եկել, եւ հաղթողը....»* (էջ 86):

Այդպես էլ ֆրանսիացիներին հավատացող հայերը փլատակներ ստացան. թուրքերի հետ խաղաղ ապրելու՝ Արամի եւ նրա նման մտածողների հույսերն ավերակների տակ մնացին:

Ֆրանսիայի վարած ուխտադրուժ քաղաքականությունը սպառիչ է բնութագրում հեղինակը՝ վեպում հանդես բերված հենց ֆրանսիացի Դյուրեի նկարագիրը գնահատելիս. *«....արդարամտության այդ զինվորը ֆրանսիացի է, բայց ֆրանսիացին Դյուրե չէ»*: Ու այդ *«չէ»*-ն զինաթափել տվեց տասը հազարանոց հայկական լեգեոնը, ձերբակալեց ու աքսորեց Կիլիկիայի ինքնավարությունը հռչակած հայկական կառավարության անդամներին, որի հետեւանքով այդ *«անկախությունը»* ընդամենը մեկօրյա կյանք ունեցավ:

Ամերիկացիների վերաբերյալ եւս վեպում առկա են իրականությունից բխած եզրահանգումներ. *«Որբացնել են տալիս ժողովրդին,*– գրում է Ալաջաջյանը,– *որպեսզի հետո հավաքեն նրա որբերին»* (էջ 89): ➥ *էջ 6*

Բիոէթիկայի եւ իրավագիտության զարգացման հեռանկարները 21-րդ դարում

Սկիզբը՝ թիվ 1–2

Բիոէթիկայի ոլորտում միջազգային փաստաթղթերից առանցքային նշանակություն ունի Մարդու իրավունքների եւ կենսաբժշկության մասին կոնվենցիան (Օվիդեոյի կոնվենցիա): Ի տարբերություն բժշկական հարցերին վերաբերող միջազգային այլ փաստաթղթերի՝ մասնավորապես «Հելսինկյան հռչակագրի», որոնք պարունակում են առավելապես դիսպոզիտիվ նորմեր, Մարդու իրավունքների եւ կենսաբժշկության կոնվենցիան պարունակում է պարտավորեցնող նորմեր:

Կոնվենցիայի հիմքում այն գաղափարն է, որ մարդու շահը գերակա է հասարակության եւ գիտության շահից: Կոնվենցիան արգելում է գենոտիպի հիման վրա ցանկացած խտրականություն, իսկ գենետիկ թեստերի իրականացումը թույլատրելի է միայն բժշկական նպատակներով. գենետիկ ինժեներիան թույլատրվում է կանխարգելիչ, ախտորոշիչ եւ թերապեւտիկ նպատակներով եւ միայն այն դեպքում, եթե դրա արդյունքում չի փոխվի անհատի սերնդի գենոտիպը: Այն արգելում է բժշկական միջամտությամբ եւ տեխնիկայի կիրառմամբ որոշել ապագա պտղի սեռը՝ բացառությամբ ժառանգական հիվանդությունների փոխանցումը կանխարգելելու դեպքերի:

Կոնվենցիայի իմաստով այն երկրները, որոնք նախատեսում են in-vitro (*In-vitro լատիներեն նշանակում է «ապակու մեջ»: Բժշկագիտությունում այն օգտագործվում է որպես մարդկային վերարտադրության արտամարմնական ձեւ* (*in vitro fertilization*)) հետազոտության հնարավորություն, պետք է արգելեն ուսումնասիրության նպատակներով մարդկային սաղմի ստեղծումը եւ ապահովեն վերջինիս պաշտպանությունը: Կոնվենցիայի 5-րդ հոդվածով նախատեսվում է, որ առողջության բնագավառում ցանկացած միջամտություն կարող է իրականացվել բացառապես այն դեպքում, երբ անձը նախապես եւ համաչափորեն իրազեկվել է միջամտության ձեւի, հետեւանքների ու ռիսկերի մասին եւ միջամտության վերաբերյալ տվել է իր ազատ համաձայնությունը: Անձը ցանկացած պահի կարող է հրաժարվել իր համաձայնությունից: Եթե անձը, ելնելով իր կարգավիճակից, զրկված է համաձայնություն տալու հնարավորությունից (անչափահասներ, անգործունակներ եւ այլն), ապա բժշկական միջամտությունը թույլատրելի է, եթե այն ուղղակիորեն կհանգեցնի առողջության դրական փոփոխությունների:

Բիոհիրավունքի համակարգը

Վերջին տարիների հասարակական հարաբերությունների արագընթաց զարգացումը վերափոխել է բժշկական էթիկայի մոնոդիսցիպլինար բնույթը, որում գերակայում էր հայրավարությունը (paternalism), ըստ որի՝ բժշկի որոշումը բուժման լավագույն միջոցն է, հետեւաբար հիվանդի համար ունի պարտադիր նշանակություն: Բժշկական տեխնոլոգիայի, մարդու իրավունքների գիտակցման եւ բարոյական նորմերի զարգացմանը զուգընթաց անհրաժեշտություն ծագեց բժշկական էթիկան դիտարկել ոչ միայն բացառապես բժշկագիտության տեսանկյունից, այլեւ ուսումնասիրման առարկա դարձնել այլ գիտությունների համար, որով եւ պայմանավորվեց վերջինիս միջդիսցիպլինար բնույթը (*Sperling D., Law and Bioethics: A Rights-Based Relationship and Its Troubling Implications. The Hebrew University of Jerusalem. 2008, Vol. 11. էջ 52–78*):

Բիոէթիկայի իրավագիտական ուսումնասիրությունը հանգեցրել է նոր եզրույթների՝ մասնավորապես բիոհիրավագիտության (լատ. Bios – կյանք, jurisprudentia – իրավագիտություն) առաջացմանը (այսուհետ կգործածվի «բիոհիրավունք» հասկացությունը՝ որպես իրավաբանական գիտություն):

Հետխորհրդային տարածաշրջանում բիոհիրավունքի հարցերի ուսումնասիրության նախակարապետները լեհ եւ ուկրաինացի իրավաբաններն են՝ մասնավորապես Ռ. Տոկարչիկը, Ս. Ստեցենկոն եւ այլք, որոնք ռոմանագերմանական իրավամտածողությանը հատուկ ձեւաչափով ներկայացնում են բիոհիրավունքի հասկացությունը, ուսումնասիրության առարկան եւ համակարգը:

Բիոհիրավունքը նորագույն գիտահիրավական տեսություն է, որի հիմքում մարդու կյանքի՝ որպես բիոսոցիալական արժեքի ընկալումն է, եւ նպատակն է կենսաբանության եւ բժշկության ինտենսիվ զարգացման պայմաններում իրավական միջոցներով ապահովել եւ պաշտպանել մարդու կյանքը (*Стеценко С. Г., Біоюриспруденція як новий напрям правових наукових досліджень. Публічне право, № 3 (11) (2013), А. 260, Мережко О., Біоюриспруденція – новий напрям в сучасній науці права. Юридичний журнал. 2008. № 1 (67). Ц. 135*):

Բիոհիրավունքը՝ որպես գիտություն, կենսաբանության եւ իրավագիտության համադրման տիրույթում է, իսկ անուղղակի կերպով այն առնչվում է բիոտեխնոլոգիային եւ կենսաբժշկությանը: Հարկ է նշել, որ բիոհիրավունքի ուսումնասիրման առարկան չի ընդգրկում բիոտեխնոլոգիայի եւ կենսաբժշկության բոլոր խնդիրները, այլ այն հարցերը, որոնք կապված են մարդու եւ նրա կյանքի հետ: Հաշվի առնելով մարդու բնական կյանքի միջամտությանն առնչվող հարաբերությունների վիճելի բնույթը՝ այդ հարցերի ուսումնասիրության համար անհրաժեշտ են նաեւ կրոնի, սովորույթների եւ բարոյական նորմերի վերաբերյալ խոր համեմատական գիտելիքներ, ինչպես նաեւ շրջահայացություն եւ հեռատեսություն, քանի որ խնդիրը պայմանավորված է ռիսկային փորձարարությունների անկանխատեսելի հետեւանքներով (*Tokarczyk R., The subject matter of biojurisprudence and bio-law. http://www.roman-tokarczyk.pl/biojr_en/bio_en11.htm* (*23.01.2016*)):

Հաշվի առնելով մարդկային կյանքի բնականոն ռիթմը՝ նախածննդյան հայեցակարգից մինչեւ ծնունդ եւ մահ, առանձնացվում են բիոհիրավունքի հետեւյալ երեք ճյուղերը՝ բիոհիրավական գենեզիս (Biojusgenesis), բիոհիրավական թերապիա (Biojustherapy), բիոհիրավական թանատոլոգիա (Biojusthanatology) (*Steinbock B., The Life before Birth: The Moral and Legal Status of Embryos and Fetuses, New York, 1992, Tokarzcyk R., The outline of the subject of biojurisprudence* (*մաս 1*). *Публічне право, № 3* (*11*), *2013*, *էջ 243*): ➥ *էջ 7*

Ն. ԲԵՐԴՅԱԵՎ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ուզում եմ խոսել ոչ թե մեր ժամանակների պատերազմի, այլ ընդհանրապես ուզածդ պատերազմի մասին: Ի՞նչ է իրենից ներկայացնում պատերազմը: Փիլիսոփայորեն ինչպե՞ս կարելի է ըմբռնել պատերազմը: Հպանցիկ հայացք նետելիս՝ պատերազմը շարժում է եւ նյութական զանգվածների բախում, ֆիզիկական բռնություն, սպանություն, խեղում, մեխանիկական հրեշավոր զենքերի գործողություն: Թվում է՝ պատերազմն առանձնահատուկ ընկղմում է մատերիայի մեջ եւ ոչ մի առնչություն չունի ոգու հետ: Ոգեղեն մարդիկ երբեմն շատ հեշտությամբ երես են թեքում պատերազմից այնպես, ինչպես որեւէ արտաքին նյութեղենից, ինչպես իրենց համար անընդունելի, բռնությամբ պարտադրված չարիքից, որից կարելի է եւ անհրաժեշտ է խուսափել ու գնալ դեպի հոգեւոր կյանքի վերին ոլորտներ:

Ոմանք մերժում են պատերազմը դուալիստական տեսանկյունից, ըստ որի՝ գոյություն ունի միանգամայն ինքնուրույն նյութական ոլորտ՝ արտաքին, բռնի, հոգեւոր խորությունից ու ազատությունից անջատ ու հակոտնյա: Սակայն ողջ նյութեղենը զուտ հոգեւոր իրականության խորհրդանշան է: Ողջ արտաքինը ներքինի մանիֆեստացումն է, ողջ պարտադրանքն ու բռնությունը՝ ազատության կեղծ ուղղություն: Ներքնապես խորհել պատերազմի մասին կարելի է միայն մոնիստական եւ ոչ թե դուալիստական տեսակետից, այսինքն՝ նրանում պետք է տեսնել այն խորհրդանշանը, ինչը կատարվում է հոգեւոր իրականության մեջ: Կարելի է ասել, որ պատերազմը տեղի է ունենում երկնքում, կացության մեկ ուրիշ ոլորտում՝ հոգու խորքերում, եւ նյութականի տեսանելի հարթության վրա միայն արտաքին այն նշաններն են, ինչը կատարվում է խորքում:

Ֆիզիկական բռնությունը, որն ավարտվում է սպանությամբ, ինքնին գոյություն ունեցող եղելություն չէ, ինչպես ինքնուրույն իրականությունը, դա հոգեւոր իրականության մեջ առկա չարիքի հոգեւոր բռնության նշանն է: Պատերազմի բնությունը՝ որպես նյութական բռնություն, զուտ ինքնաբերական, նշանակային, հայտանշային է եւ ոչ թե ինքնուրույն:

Պատերազմը չարիքի ակունքը չէ, այլ միայն չարիքի ռեֆլեքսը, ներքին չարի եւ հիվանդության առկայության նշանը: Պատերազմի բնությունը խորհրդանշային է:

Այսպիսին է ուզածդ նյութական բռնության բնությունը. այն մշտապես երկրորդական է եւ ոչ թե առաջնային: Հոգեւոր իրականության ակնհայտ վիճակը, որում գտնվում է մարդկությունը, անխուսափելիորեն պետք է ընթանա նյութականի նշաններով՝ որպես զենքի, առանց որի մարդը չի կարող իրականացնել իր մեջ հոգեւոր կյանքը: Իր հոգեւոր կյանքն արտահայտելու համար մարդը պետք է շարժվի ձեռքերով, ոտքերով, լեզվով, այսինքն՝ դիմի նյութական միջոցների, առանց որոնց չի կարող արտահայտել իր սերն ու ատելությունը, չի կարող իրականացնել իր կամային ձգտումները: Պատերազմը ոտքերի ու ձեռքերի շարժումների, տարբեր զենքերի մի բարդ համակառույց է, որը տրվում է մարդկային կամքի շարժումներին:

Սկզբունքորեն թույլատրելի է առանց նյութական նշանների եւ զենքի հոգեւոր կյանքի հնարավորությունը, սակայն դա նշանակում է հոգեւոր իրականության այլ մակարդակ, որին դեռ այժմ չեն հասել մարդկությունն ու աշխարհը:

Լինում են հիվանդություններ, որոնք ընթանում են դեմքի վրայի ցանավորումներով: Ցանը հենց նշանն է ներքին հիվանդության: Արտաքին ցանի հեռացումը կարող է հիվանդությունը դեպի ներս մղել, եւ դրանից կարող է հիվանդությունն ավելի վատ ընթացք ունենա: Հարկավոր է բուն ներքին հիվանդությունը բուժել: Պատերազմի չարիքը մարդկության ներքին հիվանդության ազդակն է:

Նյութական բռնությունը եւ պատերազմի սարսափները լոկ մարդկության մարմնի ցաներն են, որոնցից չի կարելի ազատվել արտաքնապես եւ մեխանիկորեն: Մենք բոլորս մեղավոր ենք մարդկության այս հիվանդության գործում, որ «դուրս է տալիս» պատերազմով: Երբ բացահայտվում է որեւէ թարախային խոռոչ, ապա չի կարելի տեսնել չարիքը դեռ չբացված խոռոչում: Երբեմն այդ բացվածքը պետք է կատարել բռնությամբ՝ հանուն կյանքի փրկության:



Մեր հոգեւոր իրականության խորքում վաղուց են սկսվել համաշխարհային պատերազմը, համաշխարհային թշնամանքը, ատելությունը եւ փոխադարձ ճնշումները: Եվ այն պատերազմը, որ սկսվել էր 1914 թվականի հուլիսի վերջերին, լոկ նյութական նշանն էր հոգեւոր պատերազմի խորքերում ընթացող մարդկության հոգեւոր ծանր հիվանդության: ➥ էջ 8

ԵՐԲ ԵՂԵԳՆԵՐԸ ԿԱՆԳՈՒՆ ԵՆ

➥ էջ 5

1919-ը ոչինչ չէր տվել զեյթունցուն, 1920-ը եւս կորստաբեր էր եղել նրա համար՝ *«անծին ու անպտուղ»* (հայոց պատմության դառնաղետ շղթայում կրկնված ինչ օրինաչափություն): Եվ հիմա 1921-ն էր, Նոր տարի, իսկ իրականում ամեն ինչ հին էր, ու այդ հինը 1915-ն էր՝ իր թողած անապաքինելի վերքերով:

Համատարած այդ հուսախաբություններ մեջ զեյթունցին այլեւս պիտի կռվեր ոչ հաղթելու համար, քանի որ, ինչպես Ալաջաջյանն է գրում, *«կռվում էին.... որպեսզի ոչնչանան»* (էջ 90), ու պատահական չէ, որ այդ կռվողներն իրենց ճանապարհի երկարությամբ ձգվող քարայր-մենաստաններին յուրահատուկ նոր անվանումներ են տալիս՝ Նահատակության քարայր, Սուրբ Նպատակի քարայր, Մարտիրոսության քարայր, Վրեժի քարայր: Այն վրեժի, որ միայն իրենցը չէր, այլեւ անապատներում մնացածների, անթաղ մնացածների, գաղթի ճամփաներում խողխողվածների:

Ողջ վեպի ընթացքում ծավալվող այս դիրքորոշումը ազգային այն արժեքներից մեկն է դառնում, որն արտացոլում է հայ մարդու դիմադրողական ոգու ուժը, որը հակադրվում է ու հակակշիռ է այն սնանկ տեսակետին, թե համակերպությամբ ու հաշտվողականությամբ կարելի է գոյատեւել եւ առաջադիմել:

Համաժողովրդական ընդվզումը, անխորտակելի ու անհողդողդ կամքի դրսեւորումը վեպում այլաբանորեն են արտահայտված Զորագետի նկարագրությամբ. *«Զորագետի ահեղ հոսանքը զարնվում է ապառաժյա բնաթմբին.... Ապառաժները ետ են մղում հոսանքը, ստիպում են ջրերին պտտվել, խառնվել իրար, ոռնալ ու ինքնապտույտով գտնել նոր հուն, այսինքն՝ թեքվել դեպի արեւմուտք: Աղմուկը ահավոր է, գոռգոռում են ժայռերը, ջրերը, խճաքարերը, աղաղակում է գետի անհայտ հատակը, անդնդանում, կտրվածքից կաղկանձում է ջրապտույտը, քարերը զարնվում են իրար, ալիքները խոյանում են վեր....»* (էջ 112):

Այդպես գրում էր Աբովյանն իր վեպի «Զանգի» գլխում, այդպես գրում են միայն կրակված հոգիները: Պատկերն իրոք ուժեղ է ու խոր եւ վկայում է, թե Ալաջաջյանի ստեղծագործական երեւակայությունն ինչպիսի՞ բարձունքների կարող էր հասնել:

Զորագետի ջրերի նման ալեկոծ է Փառենի հոգին, ու նա իրոք նման է հայրենի այրված մախրենուն: Փառենից չեն տարբերվում Կարոն, որի ներաշխարհը դատարկվել է վանքում լսած մեղեդիներից, Արամը՝ այլեւս հուսաթափ պետականություն ունենալու երազանքներից, Սիմոնյանը, մյուս զեյթունցիները՝ բոլորն էլ լեցուն հարազատների հին, նոր ու սպասվող մահերի վշտերով:

Անխուսափելի մահվան այդ նույն ճամփին են հայտնվել ամենքը: Այդ դատապարտվածությունից ազատվողների կյանքը հավասար էր լինելու մի ուրիշ մահվան, որի համար էլ ողբում ու լաց են լինում Փառենն ու Սիմոնյանը. *«....լքում ենք մեր հայրենիքը.... Մեր հայրերի գերեզմանները այցելու չեն ունենա.... Ետ դարձ չկա....*

—Էլ չենք տեսնի մեր ծննդավայրը....» (էջ 281):

Զեյթունցիներն իրենց հարազատների գերեզմանները թողել էին Դեր-Զորում, այժմ հոգեւոր ու ազգային սրբությունները թողնելու էին թշնամուն, եւ իրենք մնալու էին իրենց զենքերի հետ միայն:

Իրենց վերջին կռիվը զեյթունցիները մղում են եղեգնուտում: Անզիջում մի կռիվ, որ մղվում է ոչ թե ապրելու, այլ մեռնելու՝ իրենց մահով հավերժացնելու համար այն ամենը, ինչը որ Ուլնիա աշխարհն էր ու նրա մարդիկ: Մի ամբողջ եղեգնուտ էր այն՝ Զեյթունը, եւ առանձին-առանձին մի-մի հավերժական եղեգներ էին իրենք՝ զեյթունցիները, որոնց նախորդների մասին, ինչպես արդեն գրել ենք մեր խոսքի սկզբում, այնքան հուզաթով գրել էր Զեյթունի 1860-ականների երգիչ Մկրտիչ Պեշիկթաշլյանը, որի տողերն այնքան հարիր պիտի լինեին նաեւ Ալաջաջյանի վեպի նահատակ հերոսների պարագայում՝ *«ոչ փող զարկեին»* եւ *«ոչ արծագանք լեռնասոյզ»*: Նրանց համար չհնչեցին նաեւ *«ողբոց երգեր սրտայոյզ»*: Նրանք մնացին իրենց փառքի հետ միայն եւ հենց դրա համար էլ պիտի *«շատ ապրեին»*:

Հաղթեցի՞ն, պարտվեցի՞ն զեյթունցիները... ոչ ոք չի կարող ասել: Գուցե եւ չհաղթեցին, բայց եւ չխոնարհվեցին ու մնացին կանգուն՝ բարձր, սլացիկ, հպարտ, անկոր, ասել է՝ անմահ, ասել է՝ հավերժություն: Բայց դա անիմաստ նահատակություն չէր, այլ մահ՝ հանուն ազատության ու ազգային սրբազան ուխտի: *«Ինչպիսի՞ ժողովուրդ: Մի տասնամյակ էլ չկա, եւ երկու եղեռն տեսավ: Միայնակ թողեցին նրան եւ աստված, եւ մշակույթի պաշտպանները, եւ քաղաքակրթություն քարոզող Եվրոպան, եւ մենք: Մենք մեզ միայնակ թողեցինք»*,— ընդհանրացրել է Ալաջաջյանը (էջ 289):

Եվ ուրեմն նրանք՝ բոլորը, իրենց կյանքով ու պայքարելու անհողդողդ կամքով գրեցին մեր պատմության ոսկե էջերից մեկը՝ զեյթունցիների հերթական հերոսամարտը, որի մասին վկայում են նաեւ Զեյթուն աշխարհի ժայռերի ցցվածքներին ու հաստաբուն ծառերին փորագրված գրությունները. «1919, սեպտեմբեր..., 1920, մայիս, հունիս..., կռվում է Հաճընը, կռվում է Այնթապը», «1921, հունիս..., 1921, սեպտեմբեր, 1921՝ կռիվը դեռ շարունակվում է...»:

Ինչպես Փառենը, այնպես էլ ամեն մի զեյթունցի եղավ հենց այն մարդը, որ Քրիստոսի նման կարող էր ասել՝ *«Ես այն մարդն եմ, որ տառապանք տեսա»*:

Եվ պատահական չէ, որ վեպի ավարտին Փառենը գնում է աշխարհին վկայելու, որ չի վերջացել Զեյթունի հերոսամարտը, հաղորդելու, որ «դեռ իննսունինը մարդ կա մեռնելու» պատրաստ եւ հաստատելու, որ թեեւ թշնամին ժխտում է հայության իրավունքները, բայց չի կարող ուրանալ նրա ածյունները, նրա հին ու նոր զոհողությունները, եւ որ այս վեպն էլ այլ բան չէ, քան այդ իննսունինն ապրող մարդկանց, այն հազար երեք հարյուր զոհվածների ու նաեւ մի ամբողջ ժողովրդի *ցած չդրվող զենքի պատմությունն*, ձեռքերին զենք ու հոգում վրեժ ունենալու պատմությունն:

Մանրազնին դիտարկելու դեպքում վեպում կարելի է նաեւ վիճելի հատվածներ տեսնել, օրինակ՝ համոզիչ չէ, որ թուրքերի դեմ կռիվների բովով անցած եւ պետականություն ստեղծելու երազանքով տարված Արամը Մարաշի զորքերի հրամանատար Շեւքեթի հետ կնքեր մի համաձայնագիր, ըստ որի՝ հենց պետական գործառույթները՝ հայերի ազատ երթեւեկության երաշխավորում, գայմագամի կողմից թույլտվություն, պարենով ապահովելու խոստում եւ այլն, պետք է հանձնվեին թուրքերի տնօրինությանը: Կամ՝ ինչպե՞ս կարող էր Մարաշի թեժ պաշտպանության ժամանակ Փառենը նստեր ու լաց լիներ՝ փոխանակ կռվելու:

Քիչ են համոզիչ նաեւ Տրդատի վարմունքն իր կնոջ նկատմամբ ու մանավանդ նորածին որդուց՝ այդ «ծանր» բեռից, անմարդկայնորեն ազատվելու արարքը:

Վեպում չի հիմնավորվում նաեւ ութ «դասալիքների» հեռանալը մի քանի ժամ հետո սպասվելիք կռվից առաջ, եւ այդ այն դեպքում, երբ Արամը կատարել էր նրանց պահանջը: Անհիմն են հնչում նաեւ Սիմոնյանի այն խոսքերը, որ իբր թե Հաճընի շրջակա թուրքերը հայ իշխանավորներից ավելի գոհ են «քան էին իրենց սեփական իշխանության օրոք»:

Մանավանդ անընդունելի է հեղինակային այն միտքը, թե թող լինեն քրիստոնյա եւ մուսուլման հայեր...

Բայց, ինչպես ասում են, նման դրվագները բացառություններ են եւ չեն ազդում վեպի բազմընդհանուր արժանիքների վրա:

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ս. Գրիգոր Աստվածաբանի (Նազիանզացու)
Նամակը հոգեւոր դստերը

Այս նամակը սուրբ Գրիգոր Աստվածաբանն ուղղում է իր հոգեւոր դստերը՝ Օլիմպիադային՝ որպես նվեր, եւ տալիս անգին խորհուրդներ.

«Իմ սիրելի՛ դուստր, ես՝ քո հոգեւոր հայր Գրիգորը, քո պսակի առիթով քեզ եմ նվիրում այս քերթվածը: Եվ սա հոր ամենալավ խորհուրդն է դստերը:

Ուրեմն՝ լսի՛ր, սիրելի՛ Օլիմպիադա.

Գիտեմ, որ ցանկանում ես լինել ճշմարիտ քրիստոնյա: Ճշմարիտ քրիստոնյա պետք է ոչ միայն լինել, այլեւ երեւալ: Այս պատճառով քեզ խնդրում եմ, որ ուշադրություն դարձնես քո արտաքին տեսքին: Եղի՛ր պարզ: Թանկարժեք քարերով զարդարված ոսկին չի զարդարում կանանց, ինչպես եւ քեզ: Հատկապես շպարվելը պատշաճ չէ քո դեմքին՝ Աստծու պատկերին, որով այն կեղծում եւ այլափոխում ես, որպեսզի միայն ու միայն դուր գաս: Իմացիր, որ դա անհարկի պչրասիրություն է: Ցանկանում եմ, որ հաղթահարես կանացի պչրասիրությունը եւ պարզ տեսք ունենաս: Թանկարժեք եւ շքեղ հագուստներ թող կրեն նրանք, ովքեր չեն ձգտում բարձր կյանքի, ովքեր չգիտեն՝ ինչ է նշանակում պայքար եւ առաքինություն, ովքեր չգիտեն՝ ինչ է նշանակում հոգեւոր ճառագայթում: Սակայն դու մեծ նպատակներ ունես քո կյանքում: Քո այդ նպատակները պահանջում են ուշադրություն եւ հոգատարություն:

Ամենից առաջ հարգի՛ր եւ սիրի՛ր Աստծուն եւ հետո հարգի՛ր եւ սիրի՛ր քո ամուսնուն ինչպես Տիրոջը. այսպես է հորդորում Ավետարանը: Սակայն այն կինը, որը չի ճանաչում Տիրոջը, չի հարգում եւ սիրում Նրան, ինչպե՞ս կարող է հասկանալ սրա իմաստը:

Ամուսնությամբ քո գորովը եւ սերը թող բոցավառ լինեն նրա հանդեպ, ում Աստված է քեզ տվել, նրա հանդեպ, ով եղավ քո կյանքի աչքը եւ ուրախությամբ լցրեց քո սիրտը: Եթե անգամ հասկանաս, որ քո ամուսինը քեզ ավելի շատ է սիրում, քան դու նրան, նրան չանտեսես, միշտ մնա՛ քո դիրքում, ինչպես սահմանում է Ավետարանը:

Նրան հարգի՛ր եւ սիրի՛ր ինչպես Տիրոջը... Իմացիր, որ կին ես եւ ունես մեծ առաքելություն, բայց տարբեր քո ամուսնուց, որը պետք է լինի գլուխը: Մի կողմ թող երկու սեռերի անմիտ հավասարությունը եւ ջանա կատարել ամուսնության պարտականությունները: Դրանց կատարման ժամանակ կտեսնես, թե որքան տոկունություն է պահանջվում այդ պարտականություններին պատշաճելու համար, ինչպես նաեւ կտեսնես, թե որքան ուժ է թաքնված թույլ սեռի մեջ:

Իմացիր, որ տղամարդիկ հեշտությամբ են բարկանում: Նրանք անսանձ են եւ նման են առյուծներին: Այս պարագայում կինը պետք է ավելի ուժեղ եւ բարձր լինի: Պետք է խաղա գազանազսպի դեր: Ի՞նչ է անում գազանազուսպը, երբ գազանը մռնչում է: Լինում է ավելի խաղաղ եւ բարությամբ մեղմացնում զայրույթը: Նրա հետ մեղմորեն եւ քաղցրորեն է խոսում, շոյում է նրան, գուրգուրում, դարձյալ շոյում. այսպես նրան հանդարտեցնում է...

Երբեք որեւէ սխալի համար մի՛ մեղադրիր եւ կշտամբիր ամուսնուդ: Մի՛ կշտամբիր նրան որեւէ թերության համար, եթե անգամ արդյունքն այն չէ, ինչը դու էիր ցանկանում: Քանի որ սատանան է՝ որպես խոչընդոտ, մուտք գործում զույգերի համերաշխության մեջ...

Ամեն ինչ՝ եւ ուրախությունը, եւ տխրությունը թող ձեզ համար ընդհանուր լինեն: Քանի որ պսակով ամեն ինչ ձեզ համար ընդհանուր եղավ: Ընդհանուր է նաեւ հոգատարությունը, քանի որ այդպես է տունն ամրանում: Արտահայտիր քո կարծիքը, բայց թող ամուսինդ որոշի:

Երբ նրան տխուր տեսնես, այդ պահին կիսի՛ր նրա տխրությունը: Քանզի տխրություն կիսելը մեծ սփոփանք է: Եվ անմիջապես պայծառացրո՛ւ քո դեմքը եւ եղի՛ր հանգիստ, առանց տագնապի: Կինն ալեկոծված ամուսնու համար խաղաղ նավահանգիստ է:

Իմացիր, որ քո տան մեջ քո ներկայությունն անփոխարինելի է, դրա համար պետք է տանտիկնոջ բոլոր հոգատարություններով սիրես այդ տունը: Քո տունը քո թագավորությունն է եւ քո շեմից շատ ելումուտ մի՛ արա: Դրսի գործերը թող ամուսնուդ:

Ուշադրություն դարձրու քո հարաբերություններին: Ուշադրություն դարձրու հաճախածդ հավաքներին: Մի՛ գնա անվայել հավաքների, քանի որ քո անաղարտության համար մեծ վտանգ կարող է լինել: Որոշ հարբերություններ ամաչկոտ մարդուց էլ են վերացնում ամոթը, աչքերը հանդիպում են աչքերին, իսկ երբ ամոթը վերանում է, ծնվում են ամենավատ չարիքները: Սակայն մտերիմ ընկերներիդ հետ մասնակցի՛ր լուրջ հավաքներին, որպեսզի քո մտքում դրոշմվի մի լավ խոսք, կամ որեւէ վատ սովորություն կարողանաս կտրել քեզանից եւ կամ քո հարաբերությունները զարգացնես ընտրյալ հոգիների հետ:

Հարաբերություն մի ունեցիր ամբարտավան կանանց հետ, որոնց միտքը դուրսն է, ցուցամոլ են: Ոչ էլ անգամ պարկեշտ տղամարդկանց հետ, որոնց քո ամուսինը չի ցանկանում տեսնել իր տանը, որքան էլ դու նրանց շատ գնահատես: Քո ամուսնուց, որին դու այսքան սիրում ես, ավելի լավ մարդ կա՞մ: Որքան էլ քո միտքը բարձր լինի, մի՛ մեծամտացիր:

Գնահատում եմ այն կանանց, որոնց շատ տղամարդիկ չեն ճանաչում: Մի՛ շտապիր գնալ աշխարհիկ խնջույքներին, անգամ եթե դրանք լինեն պսակի կամ ծննդյան առիթով: Այնտեղ պարերով, ցատկոտելով ու ծիծաղներով, կեղծ երջանկությամբ վառվում են անօրեն կրքերը, որոնք մոլորեցնում են անգամ անարատներին եւ ողջախոհներին: Անաղարտությունը շատ

նուրբ բան է. այն որպես մոմ է արեւի ճառագայթների մեջ: Խուսափի՛ր նաեւ քո տանը խնջույքների սեղաններից: Եթե կարողանայինք սահմանափակել մեր ախորժակը, կիշխեինք մեր կրքերին... ➥ էջ 8

Բիոէթիկայի եւ իրավագիտության զարգացման հեռանկարները 21-րդ դարում

➥ էջ 5

Ուկրաինացի իրավագետներն առանձնացնում են բիոհիրավունքի գրեթե նույնաբովանդակ երեք ուղղություն՝ իրավական նախաթանատոլոգիա, որը համապատասխանում է բիոհիրավական գենեզիսին, իրավական սոմատոլոգիա, որը որոշակի վերապահումներով համապատասխանում է բիոհիրավական թերապիային, եւ իրավական թանատոլոգիա (*Стеценко С. Г., Біоюриспруденція якновий напрям правових наукових осліджень. Публічне право, № 3* (*11*), *2013, էջ 261, Запорожченко А. О., Правовая танатология в системе общетеоретической юриспруденции. Jurnalul juridic national: teorie şi practicâ. № 4, 2014. էջ 12, Запорожченко А. О., Правовая танатология как новое научное направление. Актуальні проблеми держави і права, № 72, 2014, էջ 435–440: Որոշ ռուս իրավագետներ իրավական եւ բիոհիրավական թերապիան պայմանականորեն դիտում են որպես նույնաբովանդակ հասկացություններ*): Համադրելով վերը նշված մոտեցումները՝ կարելի է առանձնացնել բիոհիրավունքի՝ որպես իրավաբանական գիտության հետեւյալ ենթաճյուղերը՝ իրավական նախաթանատոլոգիա, իրավական սոմատոլոգիա եւ իրավական թանատոլոգիա:

Իրավական նախաթանատոլոգիան ուսումնասիրում է կյանքի սկզբնական փուլը՝ պտղի ձեւավորումից մինչեւ ծնունդը եղած ժամանակահատվածի իրավական կարգավորման ենթակա խնդիրները: Նախկինում իրավագիտությունը եւ օրենսդրությունը մարդկային պտղի իրավական պաշտպանության խնդիրներն ուսումնասիրում եւ կարգավորում էին դեռեւս հռոմեական իրավունքում գործող «նասցիտուրուս»

(լատիներեն՝ nasciturus) իրավական ֆիկցիայի հիման վրա, որի համաձայն՝ բեղմնավորված երեխայի շաները դիտարկվում էին որպես ծնված երեխայի շահ: Նասցիտուրուս իրավական ֆիկցիայի կիրառմամբ պտուղը համարվում էր արդեն ծնված, քանի որ խոսքը վերաբերում էր նրա շահին: Ներկայումս բեղմնավորման արհեստական միջամտության եւ մոդելավորման տեխնոլոգիաների զարգացման պայմաններում իրավական ֆիկցիան արդեն իր տեղը պետք է զիջեր բիոհիրավունքի նորմերին, որը պայմանավորված է գենային տեխնոլոգիաների, բեղմնավորման եւ նախածննդյան ժամանակահատվածում իրականացվող դիագնոստիկայի զարգացմամբ (*Tokarczyk R., The outline of the subject of biojurisprudence* (*մաս 1*). *Публічне право № 3* (*11*), *2013, էջ 243*):

Սույն հոդվածում իրավական սոմատոլոգիան եւ բիոհիրավական թերապիան պայմանականորեն կդիտվեն որպես նույնաբովանդակ հասկացություններ:

Իրավական նախաթանատոլոգիայի առավել հասուն դրսեւորումը ծնվելու իրավունքն է, որը՝ որպես բիոհիրավական ինստիտուտ, պետք է պտղի ձեւավորումից մինչեւ երեխայի ծնունդը եղած ժամանակահատվածում առկա հարաբերությունները կարգավորող եւ տարաբնույթ նորմատիվ ակտերում տարրալուծված իրավական նորմերը միավորի մեկ ամբողջական նորմատիվային համակարգում (*Եվրոպական մի շարք պետություններ Սահմանադրություններում ամրագրել են պտղի ձեւավորման պահից մարդու կյանքի եւ արժանապատվության իրավունքի մասին դրույթներ: Օրինակ՝ Հունգարիայի նոր Սահմանադրության 2-րդ հոդվածում ամրագրված է, որ մարդու կյանքը պետք է պաշտպանվի պտղի ձեւավորման պահից: Իռլանդիայի 01.06.1937 թ. Սահմանադրության 40-րդ հոդվածում նույնպես ամրագրված է, որ պետությունը ճանաչում է չծնվածի կյանքի իրավունքը, եւ հավասարապես նկատի ունենալով մոր կյանքի իրավունքը՝ օրենքներով երաշխավորում է այդ իրավունքը: Մինչեւ ծնունդը կյանքի իրավունքի ճանաչման եւ սահմանադրական երաշխավորման հարցում մեծ ազդեցություն ունի Կաթոլիկ Եկեղեցին: Пупинг Г., Пекорарио А., Новая Венгерская Конституция* (*25 апреля, 2011*), *Европейский Правовой Центр, 2011, էջ 13*):

Իրավական սոմատոլոգիան ուսումնասիրում է մարդու (կենդանու) մարմնին առնչվող այն հիմնախնդիրները, որոնք անմիջականորեն կապված են կյանքի հետ՝ ծննդից մինչեւ մահ՝ մասնավորապես օրգանների փոխպատվաստում (տրանսպլանտալոգիա), ստերջացում (ստերիլիզացիա) եւ ամլացում (կաստրացիա): Իրավական սոմատոլոգիան ուսումնասիրում է նաեւ հոգեբուժության եւ սեռականության՝ մասնավորապես սեռափոխության խնդիրները (*Лаврик М. .А., К теории соматических прав человека> Сибирский Юридический Вестник, 2005, №3: http://law.edu.ru/doc/document.asp?docID=1229707* (*23.01.2016*)): Այլ կերպ ասած՝ իրավական սոմատոլոգիան ուսումնասիրում է մարդու սոմատիկ իրավունքների համակարգը եւ դրանց ճանաչման, պահպանման եւ պաշտպանության հիմնախնդիրները:

Իրավական սոմատոլոգիայի (կենսաիրավական թերապիայի) զարգացման միտումներից մեծ դժվարություններով նշմարվում է այն, որ կյանքի իրավունքը աստիճանաբար ընդլայնվում է՝ մարդու կյանքի իրավունքից վերածելով կենդանիների կյանքի իրավունքի, ընդհուպ կենդանական աշխարհի բոլոր ներկայացուցիչների կյանքի իրավունքի (*Tokarczyk R., The outline of the subject of biojurisprudence* (*մաս 1*), *Публічне право № 3* (*11*), *2013, էջ 243*):

Իրավական թանատոլոգիան ուսումնասիրում է կյանքի ավարտին վերաբերող հարցեր՝ մասնավորապես կյանքի ավարտի կենսաբանական մոտեցումից տարբերվող մահվան տեսակները՝ կլինիկական, սոցիալական, ուղեղի մահ, հղիության արհեստական ընդհատում, ինքնասպանություն, էվթանազիա, մահապատիժ, այսինքն՝ այն ամենը, ինչը պայմանավորված է կյանքի ավարտով:

Նշված ընդհանուր վերլուծությունից պարզ է դառնում, որ բիոհիրավունքի հիմքում են, համապատասխանաբար, ծնվելու իրավունքը (իրավական նախաթանատոլոգիա), կյանքը ու մարմինը տնօրինելու իրավունքը (իրավական սոմատոլոգիա) եւ մահվան իրավունքը (իրավական թանատոլոգիա):

Սուսաննա ԴԱՎԹՅԱՆ
Փիլիսոփայական գիտ. դոկտոր

Ս. Գրիգոր Աստվածաբանի Նամակը Հոգեւոր դստերը



➥ էջ 7

Հանդարտությունդ պահիր եւ տեսքդ մի՛ այլափոխիր ո՛չ ծիծաղով, ո՛չ էլ ծամածռություններով, երբ բարկացած ես: Ունկերդ թող չզարդերեն մարգարիտները, այլ թող լսեն լավ խոսքեր եւ վատ խոսքերի համար թող փական լինեն մտքումդ: Նրանք լինեն բաց թե փակ, լսողությունն անաղարտ թո՛ղ մնա:

Աչքերը ցույց են տալիս հոգու ողջ ներաշխարհը: Քո կոպերից թող կաթի կուսական անաղարտ ամոթը: Շատ հարցերում նախընտրելի է աչքերդ փակ պահես՝ հայածքդ ներքեւ խոնարհած:

Եթե անսանձ լեզու ունենաս, քո ամուսինը կլինի քո թշնամին, եթե անգամ հազար այլ շնորհներ էլ ունենաս: Անսանձ լեզուն շատ հաճախ վտանգի է ենթարկում նույնիսկ անմեղներին: Եթե անգամ ճիշտ ես, նախընտրիր լռությունը: Ավելի նախընտրելի է, որ ինչ-որ անվայել խոսքի համար քեզ վտանգի չենթարկես: Եթե անգամ ցանկություն ունես շատ բան ասելու, ավելի լավ է լռես:

Ուշադրություն դարձրու նաեւ քո քայլվածքին: Քայլերդ խոհեմությամբ չափիր:

Ուշադրություն դարձրո՛ւ եւ լսի՛ր նաեւ սա. մարմնական անսանձ ձգտում մի՛ ունեցիր: Համոզի՛ր նաեւ քո ամուսնուն, որ հարգի սուրբ օրերը: Քանի որ Աստծու օրենքները Աստծու պատկերից ավելի բարձր են:

Եթե իմ նման ծերունուց հոգեւոր խոսք ստացար, քեզ հանձնարարում եմ, որ դրանք պահես հոգուդ խորքում: Այժմ այս նվերը քեզ եմ մատուցում: Եթե ուզում ես նորից քեզ մաղթեմ ամենալավը, քեզ մաղթում եմ ամենալավը, քեզ մաղթում եմ, որ լինես պտղատու այգի՝ զավակների զավակներով, որպեսզի բոլորից շատ փառաբանվի Աստված, Որի համար ծնվում ենք եւ դեպի Որը պետք է այս կյանքն առաջնորդենք»:

«ΓΑΜΟΣ-Πνευματικό Γυμναστήριο» գրքից

Հունարենից թարգմանությունը՝
Գաբրիել քհն. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Համաստեղի «Սպիտակ ձիաւորը» վեպը

➥ էջ 3, 4

Հիշվում են նաեւ ասորաբնակ գյուղեր, օրինակ՝ Զրավանը, որի բնակիչները հայախոս ասորիներ էին, կային նաեւ մի քանի հայ ընտանիքներ: Անպակաս են վանքերի, լեռների, գետերի, ճանապարհների անվանումները. Բարձրահայաց վանք (*Սուրբ Բարձրահայաց Աստվածածին եկեղեցին Արողնի բերդի անմատչելի լեռան գագաթին կառուցվել է 1431–1432 թթ.՝ միջնադարի մեծագույն հոգեւոր գործիչ եւ տաղերգու Մկրտիչ Նաղաշի (մոտ 1400– մոտ 1470) Ամիդում թեմի առաջնորդ եղած ժամանակ: Աստվածատուր վարդապետն իր «Յիշատակարան»-ում գրում է, որ Մկրտիչ Նաղաշը նորոգել է բազմաթիվ եկեղեցիներ եւ կառուցել «....բազում նորաշէնս, որպէս բարձր Աստուածածինն՝ ի գլուխ բարձր բերդին Արղնոյ» («Մկրտիչ Նաղաշ», Երեւան, 1965, էջ 205, աշխատասիրությամբ՝ Է. Խոնդկարյանի*), Ձիաթռնուկ սար, Արծվասար, Կաքավի լեռ, Չարխափան անտառ... Վիպական գործողությունները զարգանում են հաջորդական տեղաշարժերով՝ գյուղից գյուղ, որոնց թիվը տասնյակից ավելի է: Տեղաշարժերի հետ մեկտեղ ավելանում են նորանոր հերոսներ, եւ դա՝ առաջին էջերից մինչեւ վերջինները (*Հեղինակի հետագծով պետք է շարժվել եւ ի մի բերել բնակավայրերի, ճանապարհների կապը եւ հարյուրների հասնող հերոսների շղթան: Վեպի գիտական հրատարակության դեպքում անհրաժեշտ է հեղինակային բնութագրություններով դուրս գրել թե՛ բնակավայրերի անվանումները, թե՛ աշխարհագրական տեղանունները, թե՛ հերոսների անունները, ավելացնել իրական տեղանուններն ու անձնանունները եւ ծանոթագրության կարգով կցել գրքին, որի պահանջը խիստ զգացվում է*):

Իրավացի է Կարո Սասունին. «Ամբողջ Հայաստան մը իր մարդերով, կեանքի բազմաթիւ երեւոյթներով եւ շրջապատով կը վերակենդանանար Համաստեղին գրականութեան մէջ» (*Կ. Սասունի, Համաստեղ, «Պատմութիւն արեւմտահայ արդի գրականութեան», Պեյրութ, 1951, էջ 184*):

Ստեղծվում է կենդանի իրական միջավայր. գործող եւ հիշվող հերոսների շարքն անընդհատ ընդլայնվում է եւ ստեղծում դիպաշարի զարգացման նոր ու նորանոր ճյուղավորումներ: Վիպական պատումի մեջ ամեն ինչ միավորված է. արեւելքն է՝ իր հազար ու մի գիշերներով, Հայոց աշխարհն է՝ առասպելաբանությամբ, բանահյուսությամբ ու ավանդազրույցներով: Հայոց բնաշխարհիկ կյանքն ու կենցաղն են, հայ գյուղացու տոհմիկ նիստուկացը: Այլ կերպ՝ սա բնաշխարհի իրական փակ կյանքը նեկայացնող բաց վեպ է, բացված գիրք:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

➥ էջ 6

Այդ հոգեւոր հիվանդության եւ հոգեւոր պատերազմի մեջ կա համապարտ երաշխիք, եւ ոչ ոք ի զորու չէ իրենից վանելու ներքին չարիքի, ներքին սպանության հետեւանքները, որում մենք բոլորս ապրում ենք: Պատերազմը չի ստեղծում չարիքը, նա ընդամենը բացահայտում է: Ժամանակակից ողջ մարդկությունն ապրել է ատելությամբ ու թշնամանքով: Ներքին պատերազմը լոկ քողարկված է համաշխարհային բուրժուական կյանքի արտաքին ծածկույթով, եւ այդ բուրժուական կյանքի կեղծիքը, որը շատերին թվում էր հավերժական, պետք է որ անպայման դիմակազերծվեր: Մարդկային կյանքի բնաջնջումը, որ կատարվում է համաշխարհային խաղաղ կյանքում, ոչ պակաս սարսափելի է, քան այն, որ տեղի է ունենում պատերազմում:

Ավետարանում ասվում է, որ անհրաժեշտ է ավելի շատ վախենալ հոգին սպանողներից, քան մարմինը: Սակայն ֆիզիկական մահը ոչ պակաս սարսափելի է, քան հոգեւոր մահը: Իսկ պատերազմից առաջ՝ խաղաղ կյանքում, սպանվում են մարդկանց հոգիները, մարում են մարդկանց ոգիները, եւ այնքան սովորական է դա, որ դադարեցին նույնիսկ նկատել այդ սպանությունների սարսափը:

Պատերազմում ոչնչանում են մարդկանց ֆիզիկական թաղանթները, իսկ միջուկը՝ մարդու հոգին, կարող է մնալ ոչ միայն անմար, այլեւ վերածնունդ ապրել:

Խիստ բնորոշ է, որ պատերազմից եւ սպանություններից ամենից շատ վախենում են լավատեսները, որոնց համար ամենագլխավորն այն է, որ մարդը երկրի վրա լավ ապրի, եւ որոնց համար կյանքն ավարտվում է սոսկ էմպիրիկ այժմեականությամբ:

Նրանց համար, ովքեր հավատում են հոգեւոր կյանքի անսպառ լինելուն եւ այն արժեքներին, որոնք վեր են երկրային բոլոր բարիքներից, պատերազմների սարսափները, ֆիզիկական մահը այնքան էլ սարսափելի չեն: Սրանով է բացատրվում այն, որ սկզբունքային պացիֆիստներն ավելի հաճախ հանդիպում են մարդասեր-լավատեսների շրջանում, քան քրիստոնյաների:

Կյանքի նկատմամբ կրոնական հայացքն ավելի խորությամբ է տեսնում մահվան ողբերգությունը, քան լավատեսական-մակերեսային հայացքը: Պատերազմը սարսափելի չարիք է եւ խորագույն ողբերգություն, սակայն չարիքն ու ողբերգությունն արտաքնապես վերցրած ֆիզիկական բռնության եւ ոչնչացումի փաստեր չեն. դրանք



առավել խորն են: Այդ չարիքի եւ ողբերգության խորքում մինչ պատերազմն արդեն մշտապես առկա են դրանց տվյալները: Պատերազմը լոկ վեր է հանում չարիքը՝ այն դուրս մղելով արտաքին դաշտ:

Ֆիզիկական բռնության եւ ֆիզիկական սպանության արտաքին գործոնը չի կարելի դիտել որպես ինքնուրյուն չարիք, որպես չարիքի ակունք: Դրա խորքում ընկած են հոգեւոր բռնությունը, հոգեւոր սպանությունը: Եվ հոգեւոր բռնության միջոցները շատ նուրբ են եւ դժվարությամբ են ի հայտ գալիս: Այն հոգեկան շարժերը եւ հոսանքները, այն խոսքերն ու զգացմունքները, ի վերջո՝ գործողությունները, որոնք չունեն ֆիզիկական բռնության նշաններ, առավել սպանիչ ու մահաբեր են, քան ֆիզիկական կոպիտ բռնությունն ու ոչնչացումը:

Պետք է ընդարձակել ու խորացնել մարդու պատասխանատվությունը: Ճշմարտությունն այն է, որ մարդը հաճախ է լինում բռնակալ ու մարդասպան՝ չկասկածելով այդ մասին, երբ ուրիշներն են դա նկատում: Չի կարելի միայն պատերազմում տեսնել բռնություն եւ սպանություն: Մեր ողջ խաղաղ կյանքը հիմքում ունի ե՛ւ բռնություն, ե՛ւ սպանություն: Եվ այս համաշխարհային պատերազմից առաջ հենց մեր կյանքի խորքում բռնաբարել եւ սպանել էինք ոչ պակաս, քան պատերազմի ժամանակ: Պատերազմը սոսկ ի հայտ է բերում եւ ի ցույց դնում նյութականացված մեր հին բռնություններն ու սպանությունները, մեր ատելությունն ու թշնամանքը:

Կյանքի խորքերում առկա են մութ, անհամաչափ ակունքներ: Այդտեղից են ծնունդ առնում խոր ողբերգական հակասությունները: Եվ մարդկությունը, որ իր ներսում ունի աստվածային լույսով չլուսավորած այդ մութ ու հին տարերքները, անխուսափելիորեն պիտի անցնի խաչի սարսափի եւ պատերազմի մահվան միջով: Պատերազմներում առկա է հին պատերազմների ներակա քավությունը: Մարդկությանը տրված չէ մնալ հին չարիքի ու հին խավարի մեջ եւ խուսափել պատերազմի սարսափներից բխող ներակա հետեւանքներից: Պացիֆիզմի վերացական ցանկություններով տոգորված, մարդկությանը թողած նախկին վիճակում՝ հնարավոր չէ խուսափել պատերազմից. դա որոշակի հիմարություն է: Նման ցանկությունը պատասխանատվությունից հրաժարում է: Պատերազմը ներակա պատիժ է եւ ներակա քավություն: Պատերազմում ատելությունը միահյուսված է սիրո հետ, եւ սերը՝ ատելության: Պատերազմում հնարավորինս միմյանց են հաղորդակցվում ծայրահեղությունները, եւ դիվային խավարն էլ միահյուսվում է աստվածային լույսին:

Պատերազմը կեցության բնատուր հակասությունների նյութական դրսեւորումն է, կյանքի անհամաչափության հայտնաբերումը: Պացիֆիզմը կյանքում առկա մութ անհամաչափության մերժումն է համաչափությամբ: Սակայն հնարավոր չէ հավատալ հավիտենապես նպատակահարմար աշխարհին:

Իզուր չէ Հայտնության կանխագուշակումը պատերազմների մասին: Քրիստոնեությունն էլ չի ակնկալում համաշխարհային պատմության խաղաղ ու անցավ վախճան: Ներքեւում արտացոլվում է այն, ինչը վերեւում է, երկրի վրա կատարվում է այն, ինչը երկնքում է: Իսկ վերեւում՝ երկնքում, Աստծո հրեշտակները պայքար են մղում սատանայի հրեշտակների դեմ: Տիեզերքի բոլոր ոլորտներում մոլեգնում են կրակ ու կատաղի տարերքները. պատերազմ է մղվում: Եվ Քրիստոսն էլ երկրի վրա ոչ թե խաղաղություն բերեց, այլ սուր: Եվ այստեղ է հենց քրիստոնեության անտինոմիան (հակաօրինություն). քրիստոնեությունը չի կարող չարին չարով պատասխանել, չի կարող բռնությամբ ընդդիմանալ չարին: Քրիստոնեությունը հենց պատերազմ է, աշխարհի բաժանում, խավարի ու չարի մեջ կատարվող քավության խաչի վերջնական ոչնչացում:

Քրիստոնեությունը համատարած հակասություն է: Քրիստոնեության վերաբերմունքը պատերազմի հանդեպ ճակատագրորեն է հակասական: Քրիստոնեական պատերազմ հնարավոր չէ, ինչպես հնարավոր չէ քրիստոնեական պետություն, քրիստոնեական բռնություն եւ սպանություն: Բայց կյանքի ողջ սարսափը քրիստոնեությամբ է փարատվում, փարատվում որպես խաչ եւ ապաշխարում մեղքերի: Պատերազմը մեղք է, սակայն այն եւս մեղքերի ապաշխարություն է: Նրանում անարդար, մեղավոր, չար կյանքը խաչ է բարձրանում:

Շարունակելի

Թարգմանությունը՝ Ա. Ս.-ի

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 13.04.2022 թ.
Տպաքանակը՝ 1225